



«ԼԻՎՎՈՐ» ՓԲԸ-ի դեղագործական արտադրության

վերազինման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկող՝ «ԼԻՎՎՈՐ» ՓԲԸ




Նախագծող՝ 

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ.....	4
3. Օգտագործվող հապավումները.....	4
4. Նախնական գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացը	8
6. Գործընթացի մասնակիցները.....	9
7. Գործունեության ընդհանուր բնութագրերը.....	10
8. Շրջակա միջավայրի բնութագրերը	12
8.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը	12
8.2. Սեյսմիկա և երկրաբանություն.	13
8.3. Կլիմա և օդային ավազան	14
8.4. Հողային ռեսուրսներ.....	22
8.5.Ջրային ռեսուրսներ	22
8.6. Կենսաբազմազություն	23
8.7. Պատմության և մշակութային հուշարձաններ	24
8.8. Հատուկ պահպանվող տարածքներ.....	27
8.9. Սոցիալ-տնտեսական.....	28
9. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը.....	30
10. Նախատեսվող գործունեության նկարագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը	31
10.1 Արտադրական տարածք.....	31
10.2 Ներկա և վերագինվող հոսքագծերի բնութագրերը.	33
10.3 Գործարանի արտադրատեսակները և արտադրական հզորությունները	35
10.4 Ջրամատակարարում	36
10.5 Ջրահեռացում.....	36
10.6 Էլեկտրամատակարարում	37
10.7 Գազամատակարարում	37
10.8 Ջերմամատակարարում	37
10.9 Հովացման համակարգ	37
10.10 Օդափոխություն	37
10.11 Աղբահեռացում	38
11. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	38
12. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը	39
12.1 Օդային ավազան.....	39
12.2. Ջրային ռեսուրսներ	42

12.3 Հողային ռեսուրսներ.....	49
12.4 Կենսաբազմազանություն.....	50
12.5 Թափոններ	50
12.6 Աղմուկ և թրթռում.....	54
12.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	54
12.8 Արտակարգ իրավիճակներ և անվտանգություն.....	54
12.9 Մարդու առողջություն և աշխատանքի անվտանգություն.....	55
12.10 Սոցիալական ազդեցություն	56
12.11 Կանաչապատում.....	56
12.12 Գումարային ազդեցություններ.....	56
13. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում.....	57
14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը	59
14.1 Օդային աղազան.....	59
14.2 Ջրային ռեսուրսներ.....	60
14.3 Թափոններ	60
14.4 Աղմուկ և թրթռում.....	61
14.5 Արտակարգ իրավիճակներ և անվտանգություն.....	61
14.6 Մարդու առողջություն և անվտանգություն, աշխատանքի կազմակերպում.....	62
15. Մոնիթորինգ	64
16. Բողոքների ընթացակարգ	65
17. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների (կառավարման պլան) նախագիծ.....	65
18. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների (կառավարման պլան) նախագիծ.....	66
19. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ	74
20. Հետնախագծային վերլուծություն	78
21. Հանրային ծանուցում և քննարկումներ	78
22. Եզրահանգում.....	78
Գրականություն	80

1. Ընդհանուր տեղեկատվություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի դեղագործական արտադրության վերագինման
Ձեռնարկող	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Բոչինյան 7/9
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Ք. Երևան, Բոչինյան 7/9
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Հեռ. 060378800 info@liqvor.com
Պատվիրատու	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան, Բոչինյան 7/9
Աշխատանքային նախագծի մշակող	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ
Գնահատման հաշվետվության նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բոյունսովի 6 (012)21-10-01, (093)39-77-60 noval-llc@outlook.com

2. Հավելվածներ

- Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը
- Հավելված 2. Տարածքի հատակագիծ
- Հավելված 3. ՀԷՑ-ի կողմից տրված էներգամատակարարման պայմանագիրը
- Հավելված 4. Վեոլիա ջրի պայմանագիրը
- Հավելված 5. Հայռուսգագարդի պայմանագիրը
- Հավելված 6. Աղբահանության պայմանագիրը
- Հավելված 7. «Էկոլոգիա Վ.Կ.Հ»ՍՊԸ-ի պայմանագիրը
- Հավելված 8. Երևանի քաղաքապետարանի գրությունը ՇՄԱԳ հաշվետվության հանրային լսման /3-րդ հանրային լսում/ վերաբերյալ
- Հավելված 9. Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ
- Հավելված 10. «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգ կենտրոն» ՊՈԱԿ-ի գրությունը՝ քամու վտանգավոր արագության վերաբերյալ
- Հավելված 11. Յրման հաշվարկ՝ Ուլարգա Էկոլոգ 4.6 ծրագրով
- Հավելված 12. Տեխնիկական առաջադրանք

3. Օգտագործվող հապավումները

- ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՓԲԸ՝ փակ բաժնետիրական ընկերություն
- ՇՄՆ՝ շրջակա միջավայրի նախարարություն
- ՈԿՀ՝ որակի կառավարման համակարգ
- ՊԱԳ՝ պատշաճ արտադրական գործունեության
- GMP՝ Եվրոպական ստանդարտների պահանջներ

4. Նախնական գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

1.«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին»

ՀՀ օրենք (2014) - Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

2.«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) – Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

3.«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) - Սահմանում է Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության հիմնադրույթների սահմանումը, հուշարձանների պետական հաշվառման, պահպանությունը, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման հարցերի կանոնակարգման սկզբունքները:

4.«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը:

5.«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

6.«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների

պաշտպանության իրավական հիմքերը:

7. «Դեղերի մասին» ՀՀ օրենք (2016թ.) - Կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում:

8. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) - Սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահամման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

9. «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
1	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
2	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
3	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
	Էվոթոֆիկացիայի և գետնամերձ օդոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
4	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեսքատու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
5	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրասահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
6	«Օգոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.) ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս 1998թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
		2001	1998	2001	

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 28 Փետրվարի 2019թ. 199-Ն որոշում՝** «Դեղերի և դեղանյութերի արտադրության պատշաճ արտադրական գործունեության կանոններին համապատասխանության դիտարկման պատշաճ արտադրական գործունեության հավաստագրի տրամադրման կարգերը, ինչպես նաև դեղերի արտադրության լիցենզավորման նպատակով փորձաքննության իրականացման կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի N 1603-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 23-ի N 1089-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության N 164-Ն որոշում՝** «Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերի, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի մասին ահազանգի ծանուցման, շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը սահմանելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝** «Հանրային ծանուցման ել քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:

- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում**՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում**՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 15.03. 2007թ. N385-Ն որոշում**՝ «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի 160-Ն որոշում**՝ բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹ-Կ) նորմատիվների վերաբերյալ:
- ❖ **ՀՀ Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշում**՝ «Բնակավայրերի կանաչ գոտիչների չափերն ու տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781 որոշումը**, «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման վերաբերյալ»:
- ❖ **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2003 թվականի N 1110-Ն որոշում**՝ «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատելու մասին :
- ❖ **ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշում**՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատելու մասին:
- ❖ **ՀՀ կառավարության 25 հունվարի 2005 թվականի N 92-Ն որոշում**՝ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատելու մասին:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացը

Հայաստանի Հանրապետությունում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն այս օրենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: Համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի ա) ենթակետի՝ դեղագործական արդյունաբերության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են «դեղանյութերի արդյունաբերական արտադրությունը»:

Նախատեսվող գործունեությունները համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ

հողվածի, 1-ին մասի 7-րդ կետի. «շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում» ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Նախատեսվող գործունեություն է համարվում «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի վերազինումը նոր արդիական սարքավորմամբ:

Համաձայն Օրենքի՝ նախատեսվող գործունեությունը Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ե) ենթակետի ներառված է Ա կատեգորիայի նախատեսվող գործունեությունների մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության ենթակա է Ա կատեգորիայի ընթացակարգով՝ երկու փուլով նախնական և հիմնական, համապատասխանաբար նախնական գնահատման հայտը, այնուհետև ՇՄԱԳ հաշվետվությունը: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նախնական գնահատման հայտին տրամադրվել է տեխնիկական առաջադրանք (Հավելված 12):

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ հնարավոր բացասական ազդեցությունները՝ նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, ՀՀ Օրենսդրությունը և Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքը:

6. Գործընթացի մասնակիցները

Զեռնարկող՝ «ԼԻԿՎՈՐ» ՓԲ ընկերություն, որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի, Բոչինյան 7/9 հասցեում գոյություն ունեցող արտադրական գոտում՝ սեփական տարածքում (Հավելված 1), ընկերությանն 2005-06-10 անժամկետ տրամադրված պետական ռեզիստրի հիման վրա՝ գրանցման համարն է՝ 271.120.02932:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է.

- ՀՀ-ում գործող դեղագործական արտադրության ոլորտին առնչվող համապատասխան օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին համապատասխան:

- Անհրաժեշտ թույլտվությունների և /կամ համաձայնությունների հիման վրա, ապահովելով բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների, ինչպես նաև առողջության և անվտանգության պահանջների պահպանումը:

Շրջակա միջավայրի նախարարություն

Շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը: Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով: Նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության

աշխատակազմ» պետական կառավարման հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 8 օգոստոսի 2002 թվականի N 1237-Ն որոշմամբ:

ԾՄՆ իրականացնում է գործառույթների առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացակարգը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից, գործընթացում ներգրավվում են նաև ԾՄՆ-ի առանձնացված ստորաբաժանումները:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Արտակարգ իրավիճակների նախարարություն

Հայաստանի հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» 2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի N 740-Լ որոշմամբ: Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Երևան քաղաք, շահագրգիռ հանրություն

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Նոր Նորքի վարչական շրջանում՝ Քոչինյան 7/9 հասցեում՝ արդյունաբերական գոտում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման՝ Նոր-նորքի վարչական շրջանում իրականացվելու են չորս փուլով հանրային քննարկումներ, որոնցից երեքն արդեն իրականացվել են:

7. Գործունեության ընդհանուր բնութագրերը

«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ն գործում է Նոր Նորք վարչական շրջանի, Քոչինյան 7/9 հասցեում գոյություն ունեցող արտադրական տարածքում: Նախատեսում է իրականացնել գոյություն ունեցող դեղագործական արտադրության վերազինում՝ նոր արդիական սարքավորումով:

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2006թ. տրված եզրակացության՝ արտադրամասի տարածքը մոտակա բնակելի տնից գտնվել է 140 մ հեռավորության վրա: Այս տարիների ընթացքում գործարանի տարածքը փոփոխությունների չի ենթարկվել: Բնակելի և հասարակական շինությունների անկանոն կառուցապատման հետևանքով այժմ ամենամոտ հասարակական և բնակելի շենքերը գտնվում են 59,2մ հեռավորության վրա:

Տարածքի իրավիճակային հատակագիծը



«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ն ներկայումս իրականացնում է հեղուկ, ստերիլ դեղամիջոցների արտադրություն: Ներկա վիճակում ընկերությունն արտադրում է կաթիլաներարկման լուծույթներ, ակնակաթիլներ և ներարկման լուծույթներ:

«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ն գործունեությունն իրականացնում է իր սեփականությունը համարվող 0,62 հա տարածքում որը գտնվում է Երևան-Գառնի ճանապարհի ճախակողմյան մասում՝ Նոր Նորք վարչական շրջանի, Քոչինյան 7/9 հասցեում: Նշված հասցեում ընկերությունն իր գործունեությունը սկսել է 2011թ.-ից: 2006թ.-ին ընկերությունը շինարարական և արտադրական գործունեության համար ՀՀ բնապահպանության նախարարությունից ստացել է փորձաքննական դրական եզրակացություն:

Արտադրական գործունեությունը նշված հասցեում սկսել է իրականացնել 2011թ.-ից: «ԼԻԿՎՈՐ» ընկերության գործունեության նպատակն է սպառողներին առաջարկել որակի միջազգային չափանիշներին համապատասխանող արդյունավետ, անվտանգ, մատչելի դեղորայք:

Այժմ նախատեսվում է արտադրության մասնակի վերազինում՝ Գերմանական արտադրության FLL 201/GB-TS մակնիշի, 2020թ. արտադրության, արդիական դեղալցման հոսքագծով:

Վերը նշված հոսքագծի համալրման նպատակն է արդիականացնել արտադրությունը, ունենալ ժամանակակից, հեշտ դեկավարվող սարքավորում, ինչի արդյունքում կատարվելու է շահագործման ժամանակի կրճատում, արտադրանքի ավելացում, ինքնարժեքի նվազում,

խոտանի կրճատում, էներգակիրների խնայում: Նախորդ դեղայցման սարքի շշայցման արագությունը կազմում էր առավելագույնը՝ 3.000 հ/ժ: Նախատեսվող հոսքագծի հոսանքի ծախսը գրեթե նույնն է, սակայն դեղայցման արագությունը մի քանի անգամ գերազանցում է նախորդին:

Նախատեսվող վերագինման արդյունքում տեխնոլոգիական գործընթացի փոփոխություն չի կատարվելու: Նոր հոսքագիծը ինտեգրելու համար նախատեսվում է դեղապատրաստման տարաների, փաթեթավորման սարքերի փոփոխություն:

Արտադրական տարածքը պարսպապատված է՝ բարեկարգված և ասֆալտապատված: Պարիսպի երկայնքով և տարածքի եզրային հատվածներում իրականացվել է ծառատունկ՝ դեկորատիվ ծառերով:

Ձեռնարկության կազմի մեջ մտնում են արտադրական տարածքները, հումքի և պատրաստի արտադրանքի պահեստները, կաթսայատունը, էլեկտրական ենթակայանը, որակի վերահսկման լաբորատորիաները (մանրէաբանական, անալիտիկ, գիտահետազոտական), ավտոկայանատեղին (Հավելված 2):

Նախատեսվող գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերական է, նպատակը՝ արտադրություն կազմակերպելու համար:

8. Ծրջակա միջավայրի բնութագրերը

8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Նկար 1.



Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Հրազդան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության 40° 04' - 40° 14' և արևելյան երկայնության 44° 23' - 44° 37' միջև, երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7-8-բալանոց սեյսմիկ և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19,7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում,

շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:

Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա: Կենտրոնի բարձրությունը մոտ 1000մ է: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների.


1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք հրաբխային սարահարթը:

2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան:

3) Հրազդան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը:

4) Մշակված հողերը:

Նկար 2.



8.2. Մեյսմիկա և երկրաբանություն

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Ըստ սեյսմիկ հատկության ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

8.3. Կլիմա և օդային ավազան

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով: Դրա շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները:

Ձմեռները ցուրտ են, երբեմն ձնառատ: Ամռանը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը լինում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է՝ հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը, հազվադեպ երևույթ է:

Երևանի կլիմայական տվյալները

Ամիս	հունվ	փետ	մարտ	ապր	մայ	հուն	հուլ	օգոս	սեպ	հոկ	նոյ	դեկ	Տարի
Ռեկորդային բարձր °C (°F)	19.5 (67.1)	19.6 (67.3)	28.0 (82.4)	35.0 (95)	34.2 (93.6)	38.6 (101.5)	41.6 (106.9)	42.0 (107.6)	40.0 (104)	34.1 (93.4)	26.0 (78.8)	20.0 (68)	42.6 (108.7)
Միջին բարձր °C (°F)	1.2 (34.2)	5.5 (41.9)	12.6 (54.7)	19.4 (66.9)	24.1 (75.4)	29.9 (85.8)	33.7 (92.7)	33.4 (92.1)	28.7 (83.7)	21.0 (69.8)	12.4 (54.3)	4.6 (40.3)	18.9 (66)
Միջին օրական °C (°F)	-3.6 (25.5)	0.1 (32.2)	6.3 (43.3)	12.9 (55.2)	17.4 (63.3)	22.6 (72.7)	26.4 (79.5)	26.1 (79)	21.1 (70)	13.8 (56.8)	6.2 (43.2)	-0.2 (31.6)	12.4 (54.3)
Միջին ցածր °C (°F)	-7.5 (18.5)	-4.4 (24.1)	0.7 (33.3)	7.0 (44.6)	11.2 (52.2)	15.4 (59.7)	19.4 (66.9)	18.8 (65.8)	13.4 (56.1)	7.5 (45.5)	1.1 (34)	-3.9 (25)	6.6 (43.9)

Ռեկորդային ցածր °C (°F)	-27.6 (-17.7)	-26 (-15)	-19.1 (-2.4)	-10.2 (13.6)	-0.6 (30.9)	3.7 (38.7)	7.5 (45.5)	7.9 (46.2)	0.1 (32.2)	-6.5 (20.3))	-14.4 (6.1)	-28.2 (-18.8)	-28.2 (-18.8)
Տեղումներ մմ (դյույմ)	20 (0.79)	21 (0.83)	29 (1.14)	51 (2.01)	42 (1.65)	22 (0.87)	16 (0.63)	9 (0.35)	8 (0.31)	32 (1.26))	26 (1.02)	20 (0.79)	296 (11.65)
Միջ. անձրևոտ օրեր	2	4	8	12	12	8	5	4	4	8	7	4	78
Միջ. ձնառատ օրեր	7	7	2	0.2	0	0	0	0	0	0.1	1	5	22
% խոնավություն	81	74	62	59	58	51	47	47	51	64	73	79	62
Միջին ամսական արևային ժամ	93.0	108	162	177	242	297	343	332	278	212	138	92	2474

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀԾՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Ծովի մակարդակից մինչև 1200մ բարձրության վրա ամառը լինում է շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 35% ցածր: Լինում են բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ: Ձմեռը ցուրտ է, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ից մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0- 3,0 մ/վ: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է Երևան քաղաքի մի քանի կլիմայական տվյալները.

Օդի ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1.

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C													Միջին տարեկան	Բացարձակ	Բացարձակ
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան «Արաբկիր»	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1		11.5	-21	41

Օդի հարաբերական խոնավությունը

Աղյուսակ 2.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական, ժամը 15-ին	
	Ըստ ամիսների													Ամենացուրտ ամսվա, %	Ամենատաք ամսվա, %
	I	II	III	IV	V	VI	VI I	VI II	IX	X	X I	XII			
Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը -----, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	Ըստ ամիսների												Տարեկան	Առավել ագույն տասն օրյակ ային բարձ րու թյունը, սմ	Տար վա մեջ ձնա ծած կույ թով օրերի քանա կը	Ձյան մեջ ջրի առավել ագույն քանակ ը, մմ
	I	II	III	I V	V	V I	VI I	VII I	I X	X	X I	XII				
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	5 5	29	16	8	1 1	3 1	3 0	28	353	50	53	152
	22	28	26	34	4 7	47	34	22	4 7	3 4	3 0	26	47			


Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմությաների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					25	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Արարկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀԾՆ II-7.01.2011 նորմերի, նախատեսվող գործունեության ենթակա տարածքում կազմում է 0,7 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:

Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգ/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ² է:




Օդային ավազան. Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ: Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան, որոնց վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Գլխավոր (armmonitring.am) էլեկտրոնային հասցեում:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանս-պորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:


Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ըստ կազմակերպության 2022 թվականի էլեկտրոնային կայք էջի՝ Երևան քաղաքում հունիսի 23-ից հունիսի 29-ն ընկած ժամանակահատվածում մթնոլորտային օդում փոշու պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան Կենտրոն վարչական շրջանում՝ ամբողջ շաբաթվա ընթացքում, Արաբկիրում, Ծենգավիթում, Նոր Նորքում: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

Երևան քաղաքի մայիս ամսվա մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխություններն՝ ըստ


«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրի.




Էրևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Էրևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օդոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



8.4. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային, կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային գանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է գգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուր են՝ արդյունաբերությունը, ժամանակակից գյուղատնտեսությունը, արդյունաբերական և կենցաղային թափոնները, տրանսպորտը:

Նախատեսվող գործունեության իրականացումը հողային ռեսուրսների վրա լրացուցիչ ծանրաբեռնվածություն չի առաջացնի, քանի որ գործարանը գտնվում է արտադրական գոտում, նոր տարածքներ ձեռք չեն բերվում:

8.5. Ջրային ռեսուրսներ

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, Մուշաղբյուր վտակներով: Ներկայումս դրանք ներառվել են արհեստական հունների մեջ և սելավներից ու հեղեղումներից վնասագերծվել: Կառուցվել են Երևանյան լճի, «Հաղթանակ» զբոսայգու և այլ ջրամբարներ: Երևանում կան նաև այլ արհեստական կամ բնական լճակներ, որոնց մի մասը սնվում է ստորգետնյա արտեզյան ջրերից:

Գառնու և Ապարանի բարձունքներից խողովակներով Երևան հասնող ջուրը օգտագործվում է ոռոգման, ինչպես նաև՝ քաղաքի շատրվանների, արհեստական լճակների համար:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման

տարածքների միջոցով: Հանրապետությունում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից: Երևանի ներկայիս 33 ջրավազաններից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան լիճը, որը շահագործման է հանձնվել 1967 թվականին: Ավելի քան 40 տարվա ընթացքում լիճը հիմնովին չի մաքրվել: Գետերով այնտեղ է լցվում հսկայական քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, բերվածքների և թափոնների կուտակման հետևանքով ջրամբարի օգտագործման ծավալը գրեթե կիսով չափ նվազել է: Ըստ 2022թ. «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի մակերևութային ջրերի որակի տեղեկագրի՝ Հրազդան գետում և Գետառում աղտոտվածության ցուցանիշները բարձր են ջրերի 2-րդ դասի որակի ջրերին համապատասխանող ցուցանիշներից:

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ5-ով, ԹԶՊ-ով, նիտրիտ(0,35մգN/l), ամոնիում(50,0մգN/l) և ֆոսֆատ(6,0մգ/l-ից բարձր) իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ, ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Գործունեության տարածքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան:

8.6. Կենսաբազմազություն

Գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը գրեթե բացակայում են: Տարածքը տարիներ շարունակ մարդու ակտիվ ազդեցության գոտում է:

Բուսական աշխարհ.

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի փլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսակների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝

1. Ֆրիգանա (Ժայռային բուսականություն),
2. Տոմիլյար (անապատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրաէֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ.

Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ: Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրագույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ, երկկենցաղներից՝ լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարաոտ սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հանդիպում են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

8.7. Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշման՝ Երևան քաղաքի Նոր-նորքի վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը.

Աղյուսակ 5

1	2	3	4	5	6	7	8
1			ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐԷ - 1»	քարի դար	Նոր Նորք-Ավան մայրուղու բաժանման հատվածում, Գետառի կիրճի ծախսփնյա թեք լանջին	Հ	1
2			ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐԷ - 2»	միջին քարի դար	թաղամասի աե մասում, Նոր Նորքի 4- րդ զանգվածի մոտ, «Տորք Անգեղ» հուշարձանի հրվանդանի վրա	Հ	2

3		ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 3»	միջին քարի դար	Նոր Նորքի 3-րդ զանգվածի ամ մասուն, Գետառի ձախ ափին, հիվանդանոցի մոտ	Հ	3
4		ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 4»	հին քարի դար	Նոր Նորքի 4-րդ զանգվածի հս-աե մասուն, Ռադիոտեխնիկայի ուսումնարանի դիմաց	Հ	4
5		ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 5»	քարի դար	Նոր Նորքի 5-րդ և 7- րդ զանգվածների միջև բարձրացող բլրի ամ լանջին	Հ	5
6		ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 6»	քարի դար	Նոր Նորքի 6-րդ զանգ- վածի հվ մասուն, Գետառի կիրճի լանջին	Հ	6
7		ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ՆՈՐ ՆՈՐՔ - 7»	հին քարի դար	Նոր Նորքի 5-րդ և 7-րդ զանգվածների միջև բարձրացող բլրի զագաթից 1.3 կմ հվ, սարահարթի զոգավոր հատվածում	Հ	7
8		ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ԶՐՎԵԺ - 1»	նոր քարի դար	Զրվեժ թաղամասից 3 կմ հվ-ամ, Նոր Նորքի 4-րդ զանգվածի հարևանությամբ	Հ	8
9		ԲԱՏՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ԶՐՎԵԺ - 2»	մեզոլիթ	Զրվեժ թաղամասի հվ մասուն, խաղողի այգու եզրին, «Զրվեժ - 1» բացօթյա կայանից 250 մ հեռու	Հ	9
10		ԲԵՐԴՇԵՆ «ԱՂՎԵՍԱԲԵՐԴ»	Ք.ա. 2-1 հազ., Ք.հ. 2-4 դդ., 9-11 դդ.	Նոր Նորքի 3-րդ զանգվածում, քաղա- քային հիվանդանոցի ծննդատան մասնա- շենքի տակ և նրանից ամ	Հ	10
11		ԺԱՅՈԱՊԱՏԿԵՐՆԵՐ	Ք.ա. 2 հազ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	11
12		ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՍԲՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՉՆԴԱԿԱ- ՀԱՐՄԱՆ ՏԵՂՈՒՄ	1972 թ.	Մյասնիկյան պող., Կենդանաբանական այգու դիմաց	Տ	12

13		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԳԱՅԻ (ՀԱՅԿ ԲԺՇԿՅԱՆՑԻ)	1977 թ.	Նոր Նորքի 1-ին զանգվածում, Գայի պող. վրա	Հ	13
14		ՀՈՒՇԱՐՁԱՆ «ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ»	1972 թ.	Գայի պող.	Հ	14
15		ՀՈՒՇԱՐՁԱՆ «ՏՈՐՔ ԱՆԳԵՂ»	1982 թ.	Գայի պող.	Հ	15
16		ԶՐԱՆՑՔ «ԱՂՎԵՍԱԲԵՐԴԻ»	ուշ միջնադար	Նոր Նորքի 1-ին զանգվածի բարձունքի ամ և հվ լանջերին	Հ	16
17		ՎԻՇԱՊԱՔԱՐ	Ք.ա. 2 հազ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	17
18		ՎԻՇԱՊԱՔԱՐ	Ք.ա. 2 հազ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	18
19		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	19
20		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	20
21		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	21
22		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	22
23		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	23
24		ՏԱՊԱՆԱՔԱՐ	16 դ.	Գայի պող., բացօթյա ցուցադրության շարքում	Հ	24

25			ՔԱՆԴԱԿ «ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ»	1975 թ.	Գայի պող. բացօթյա ցուցադրության շարքում	S	25
----	--	--	----------------------	---------	---	---	----

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 6.

1	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
2	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ

Գործարանը տեղակայված է նախկին արտադրական հանգույցի տարածքում, ուստի պատմության և մշակութային հուշարձանները, բնության հուշարձանները տարածքում բացակայում են:

8.8. Հատուկ պահպանվող տարածքներ

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը:

Աղյուսակ 7.

Երևանի բուսաբանական այգի		0.8 քկմ	1935
Էրեբունի արգելոց		1.2 քկմ	1981

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

8.9. Սոցիալ-տնտեսական

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքին համապատասխան.

Աղյուսակ 8.

Տարածքը Territory	223 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the city in the territory of the Republic of Armenia , %	0.7
Գյուղատնտեսական եղանակության հողեր Agricultural land	3 330.0 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including - arable land	913.2 հա/ ha
Վարչական շրջաններ District communities	12
Բնակչության թվաքանակը 2021թ. ստրեսկզքի դրությամբ Population number as of the beginning of the year, 2021	1 091.7 հազ. մարդ/ th. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2020 թ.,% Share of city population in the total population of the Republic of Armenia 2020, %	36.8

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին: «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով՝ Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է և հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Այն խոշորագույնն է ոչ միայն Հանրապետության ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Համաձայն Երևան քաղաքի 2022թ. զարգացման ծրագրի՝ քաղաքի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 1091,747 մարդ, որից 504770-ը կազմում են տղամարդիկ, 586977-ը՝ կանայք:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2020թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 9.

Արդյունաբերություն	34.4%
Ծինարարություն	57.5%
Մանրածախ առևտուր	70.3%
Ծառայություններ	87.0%

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը, գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Աղյուսակ 10.

Սոցիալական ցուցանիշը	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
Զբաղվածությունը, հազ. մարդ	290.0	137.1	153.2
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ. մարդ	160.2	99.6	60.6
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	12676	-	-

2020թ. դրությամբ Երևան քաղաքում առկա են 224 պետական և ոչ պետական նախադպրոցական, 252 պետական և ոչ պետական հանրակրթական կրթական հաստատություններ, 50 երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 19 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն:

Համաձայն 2022թ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն առաջացնող շուրջ 671 կազմակերպություն: Երևան քաղաքի մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները (շուրջ 600000 հատ), հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողօտարումները, հողի էռոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Այդ նպատակով կարևոր է Երևան քաղաքում բուֆերային գոտիների պահպանումը, վերականգնումը և կանաչապատ տարածքների բարելավումը, ավելացումը, ոռոգման ցանցի ընդլայնում և բարեկարգումը:

9. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը

ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում դիտարկվել է նախատեսվող գործունեության գրոյական, այլընտրանքային տարբերակները, ուսումնասիրման և վերլուծության արդյունքում ներկայացվել է ընտրված տարբերակի հիմնավորումը:

Չրոյական տարբերակ-նշանակում է նախատեսվող գործունեության վերագինման չիրականացում: Վերագինման արդյունքում արդիական հոսքագծի ներդրման շնորհիվ ավելանալու է արտադրվող ներարկման և ակնակաթիլների դեղամիջոցների արտադրության ծավալները:

Վերագինում չկատարելու դեպքում արտադրական հզորությունների փոփոխություններ չեն իրականացվի, չեն արտադրվի անհրաժեշտ քանակության դեղամիջոցներ՝ ներքին և արտահանման շուկայում քանակական և որակական պահանջարկը բավարարելու համար:

Արտադրությունը կգրկվի առավել արդիականանալու, քիչ քանակությամբ խոտան առաջացնելու և շուկային առավել բարձրորակ և մեծ քանակի դեղամիջոցներ մատակարարելու հնարավորությունից:

Այլընտրանք.

- Արտադրությունում դեղերի այլ տեսակային կազմի արտադրության այլ-ընտրանք չի նախատեսվում, ինչը կարող էր լրացուցիչ ազդեցություններ առաջացնել:
- Արտադրատարածքում չի նախատեսվում կլինիկական փորձարկումների համար նախատեսված հետազոտվող, թունավոր կամ վտանգավոր դեղամիջոցների արտադրություն, ինչը կնպաստեր շրջակա միջավայրի վրա ազդեցության ավելացմանը:
- Տարածքի այլընտրանք չի դիտարկվում, քանի որ գործունեության տարածքը արտադրական է և նշված տարածքում ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է 2011 թվականից:
- Ընկերությունը տեխնոլոգիական, հումքի և օգտագործվող վառելիքի այլընտրանքներ չի դիտարկում, ինչը ևս շրջակա միջավայրի վրա նոր ազդեցություններ կարող էր առաջացնել:

Ընտրված տարբերակի հիմնավորումը.

Դեղագործական արտադրությունը լիովին համապատասխանում է դեղագործական ձեռնարկություններին ներկայացվող Պատշաճ Արտադրական Գործունեության միջազգային գործող պահանջներին և իր գործունեության 30 տարիների ընթացքում նկատելի հաջողությունների է հասել դեղագործական ոլորտում: Արտադրատարածքի հավաստագրումն իրականացվել է Առողջապահության նախարարության կողմից «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի ՊԱԳ/ՊԲԳ փորձագիտական բաժնի կողմից տրված Պատշաճ արտադրական գործունեության համապատասխանության դիտարկման եզրակացության հիման վրա:

«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ ընկերությունն այժմ Հայաստանում ստերիլ դեղերի արտադրության առաջատարն է և արտահանման ցուցանիշներով 2013թ. ստացել է Հայաստանում առաջին

Եվրոպական GMP (Պատշաճ արտադրական գործունեության) հավաստագիր, որը վերահաստատվել է 2014, 2015, 2016 և 2019թթ-ին: 2016թ հավաստագրվել է նաև Ուկրաինայի դեղերի Պետական ծառայության կողմից և ստացել Պատշաճ Արտադրական Գործունեության ԱՀԿ, ԵՄ (GMP EU) և PIC/S պահանջներին համապատասխանող հավաստագիր:

Հոսքագծի համալրումն առավել արդիականացնելու է արտադրությունը՝ ժամանակակից, հեշտ ղեկավարվող սարքավորմամբ, ինչի արդյունքում կատարվելու է շահագործման ժամանակի կրճատում, արտադրանքի ավելացում, ինքնարժեքի նվազում, խոտանի կրճատում, էներգակիրների խնայում: Նախորդ դեղացման սարքի շշայցման արագությունը կազմում էր առավելագույնը 3.000 հ/ժ: Նախատեսվող հոսքագծի հոսանքի ծախսը գրեթե նույնն է, սակայն շշայցման արագությունը մի քանի անգամ գերազանցում է նախորդին:

Արտադրության վերագինումը և արդիականացումը շրջակա միջավայրի վրա էական ազդեցություններ չի ունենալու:

10. Նախատեսվող գործունեության նկարագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական բնութագրերը

10.1 Արտադրական տարածք

Գործող ձեռնարկության կազմի մեջ մտնում են արտադրական հարթակներ, պահեստներ, կաթսայատուն, որակի վերահսկման լաբորատորիաները (մանրէաբանական, անալիտիկ-քիմիական, գիտահետազոտական), լվացքատուն, ավտոկայանատեղի: Արտադրական հարթակներն իրենց մեջ ներառում են հետևյալ արտադրամասերը.

- Կաթիլաներարկման լուծույթների արտադրամաս,
- Ակնակաթիլների և ներարկման լուծույթների արտադրամաս:

Պահեստներն օգտագործվում են տարբեր նպատակների համար, մասնավորապես.

- Պատրաստի արտադրանքի պահեստ:
- Հումքերի և օժանդակ նյութերի պահեստ:
- Երկրորդային փաթեթանյութերի պահեստ:
- Կարանտինային պահեստ՝ արտադրանքի համար:

Բացի պահեստներից և հիմնական արտադրամասերից առկա են օժանդակ ենթակառույցներ.

- կաթսայատուն,
- ներարկման ջրի ստացման արտադրամաս,
- որակի վերահսկման լաբորատորիաներ,
- կոմպրեսորային կայան,
- օդափոխության համակարգ՝ մաքուր օդ ստանալու համար:

Գործարանում առկա են նաև մաքուր գոլորշու, սեղմված օդի, ազոտի ստացման և բաշխման համակարգեր:

Մաքուր գոլորշու ստացման և բաշխման համակարգը մատակարարում է մաքուր գոլորշին CIP/SIP համակարգին, ներարկման ջրի պահպանման և բաշխման համակարգին (մանրէազերծման նպատակով), ինչպես նաև արտադրական ավտոկլավներին: Այն համապատասխանում է ԵԱՏՄ դեղագրքի հոդվածի պահանջներին: Մաքուր գոլորշու

ստացման և բաշխման համակարգի բոլոր այն մակերեսները, որոնք անմիջական շփում ունեն մաքուր գոլորշու հետ, պատրաստված են 316L մակնիշի չժանգոտվող պողպատից:

Սեղմված օդի ստացման և բաշխման համակարգը մատակարարում է սեղմված, չորացված և ֆիլտրված օդ արտադրական սարքավորումներին, օժանդակ արտադրական սարքավորումներին, օգտագործվում է նաև ինժեներական բաժնի կարիքների համար՝ 4 պտուտակային կոմպրեսորներով: Օդի ճնշման բաշխման ենթակառուցվածքում ներառված են ճնշումը կարգավորող փականներ, չորացուցիչներ և մաքրման տարբեր ունակությամբ ֆիլտրեր:

Ազոտի ստացման և բաշխման համակարգը մատակարարում է սեղմված, չորացված ֆիլտրված ազոտը արտադրական սարքավորումներին և ՌՎ քիմիական լաբորատորիաների կարիքների համար, կատարվում է լրացուցիչ ֆիլտրացում՝ սպառման կետից անմիջապես առաջ:

CIP/SIP համակարգը ապահովում է դեղապատրաստման տարաների, դեղերի վերջնական տարաների և կապակցված խողովակաշարերի, ինչպես նաև ներարկման ջրի բաշխման համակարգի ավտոմատ լվացման և մանրէազերծման հուսալի գործընթացները: Այն թույլ է տալիս օպերատորին ընտրել լվացման կամ մանրէազերծման ենթակա տարան և խողովակաշարերը՝ ավտոմատ եղանակով: Կառավարող համակարգը հսկում է տվյալ գործընթացի համար հաստատված կրիտիկական պարամետրերը՝ ջերմաստիճանը, հոսքը և տևողությունը:

Ներարկման լուծույթները և ակնակաթիլներն իրենցից ներկայացնում են ստերիլ ջրային լուծույթներ: Ներարկման ջրի ստացման համար տեղադրված է 1500լ/ժամ հզորության 1500L/HR RO կայան: Մեկ լիտր ներարկման ջուրն ստացվում է 2,4 լիտր խմելու ջրից:

Դեղերի արտադրության գործարանում տեղադրված են համապատասխան օդափոխության, ջեռուցման, հովացման, հակահրդեհային համակարգեր:

Նկար 4



10.2 Ներկա և վերագինվող հոսքագծերի բնութագրերը.

Ներկա ժամանակ արտադրամասի հոսքագիծը FLR 50/GB-TS մակնիշի է, որի արտադրողականությունն է.


- Պլաստիկ շշիկ կաթոցիկ 5մլ - առավելագույնը 3000 ժ/հ
- Պլաստիկ շշիկ կաթոցիկ 10մլ - առավելագույնը 3000 ժ/հ
- Ապակյա շշիկ 2R - 3000 ժ/հ
- Ապակյա շշիկ 6R - 3000 ժ/հ
- Ապակյա շշիկ 20R - 3000 ժ/հ:

Սույն հաշվետվությունով նախատեսվում է գործող արտադրությունը վերագինել 2020թ. արտադրության FLL 201/GB-TS հոսքագծով, որի արտադրական հզորություններն են.

- Պլաստիկ շշիկ կաթոցիկ 5մլ – առավելագույնը 11.000 հ/ժ
- Պլաստիկ շշիկ կաթոցիկ 10մլ - առավելագույնը 11.000 հ/ժ
- Ապակյա շշիկ 2R - առավելագույնը 10.800 հ/ժ
- Ապակյա շշիկ 6R - առավելագույնը 10.800 հ/ժ
- Ապակյա շշիկ 20R - առավելագույնը 9.000 հ/ժ

Հոսքագիծը բաղկացած է հետևյալ հանգույցներից՝

- Ապակյա շշիկների չորացման խցիկ:
- Պլաստիկ շշիկների սնուցման հանգույց:
- Պտտասեղան, որը համալրված է տարբեր որոյանակաձև լիսեռներով, դեղինիզացնող սարքով, ընկած շշիկների տարանջատման համակարգով, min/max տվիչներով:
- Դեղալցման հանգույց - համալրված է իներտ գազի սնուցումով, որն օգագործվում է դեղալցման գործընթացում: Տվյալ միջոցի անհրաժեշտությունը այն է, որպեսզի հետագայում հնարավոր լինի խուսափել դեղի օքսիդացումից: Կից դեղալցման հանգույցին առկա է խցանների և կափարիչների ավտոմատ դասակարգման և տեղադրման համակարգ:
- Կափարիչափակման հանգույց - նախատեսված է պլաստիկ և ալյումինե կափարիչների փակման համար:
- Հոսագծի ելքը համալրված է տարբեր տվիչներով, որպեսզի հնարավոր լինի խուսափել առանց կափարիչի, առանց դեղի, վատ խցանափակված միավորների և նորմալ արտադրանքի խառնումից:



Նոր հոսքագծի տեղադրմամբ անհրաժեշտություն է առաջացել կատարել նաև դեղապատրաստման տարաների փոփոխություն, 100 լիտր ծավալի տարան նախատեսվում է փոխարինել 250 լիտր ծավալի տարայով: Կատարվելու է նաև փաթեթավորող հոսքագծերի փոփոխում՝ համապատասխանեցում նոր դեղայցման հոսքագծին: Օգտագործվելու են 7 հատ դեղապատրաստման տարաներ.

- 50լ տարողությամբ՝ 1 հատ,
- 1650լ տարողությամբ՝ 2 հատ,
- 250լ տարողությամբ՝ 2 հատ,
- 100լ տարողությամբ դեղապատրաստման՝ 1 հատ,
- 10լ տարողությամբ դեղապատրաստման՝ 1 հատ:

Կաթսայատուն - Տարածքում առկա է կաթսայատուն, որտեղ տեղադրված է 1 հատ WNS3-1.25-Q մակնիշի շոգեկաթսա, 3000կգ շոգի/ժամ դրվածքային հզորությամբ: Կաթսայատունը շահագործվում է ինչպես արտադրական նպատակներով, այնպես էլ ջեռուցման և տաք ջրամատակարարման նպատակով: Գազի առավելագույն ծախսը կազմում է 224,4 մ³/ժամ: Համաձայն «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նախագծի (2014թ.)՝ կաթսայատան աշխատանքի ընթացքում մթնոլորտ են արտանետվում ածխածնի օքսիդ՝ 0,87տ/տարի և ազոտի օքսիդներ՝ 0,27տ/տարի: Մթնոլորտային արտանետումների ընդհանուր քանակը կազմում է 1.14տ/տարի: Գազի այրման ծխագազերը հեռացվում են d=0.41մ, H=15մ ծխնեկույզով:

Վերազինման արդյունքում գազի առավելագույն ժամային ծախսի փոփոխություն չի կատարվելու: Համաձայն ՇՄԱԳ շրջանակներում կատարված հաշվարկների՝ կաթսայատան աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետվելու են՝ ածխածնի օքսիդ՝ 0,39 տ/տարի և ազոտի օքսիդներ՝ 0,915 տ/տարի, ընդամենը՝ 1,305տ/տարի: Հաշվարկների համար հիմք է հանդիսացել ՀՀ բնապահպանության նախարարի 23 հոկտեմբերի 2012թ. N 268-Ա հրամանով հաստատված մեթոդական ցուցումները:

Սանիտարա-պաշտպանիչ գոտի. համաձայն 245-71 արտադրական ձեռնարկությունների սանիտարական նորմերի՝ «պատրաստի դեղամիջոցների արտադրությունը» դասվում է V-րդ դասի ձեռնարկությունների շարքին, որոնց համար սահմանված է 50մ սանիտարա պաշտպանիչ գոտի, ինչը պահպանված է:

10.3 Գործարանի արտադրատեսակները և արտադրական հզորությունները

Գործող գործարանում արտադրվող արտադրատեսակների տեսակային կազմի փոփոխություններ չեն նախատեսվում, արտադրվելու են կաթիլաներարկման լուծույթներ, ակնակաթիլներ և ներարկման լուծույթներ:

- Կաթիլաներարկման լուծույթներ - ձեռնարկությունը շարունակելու է արտադրել կաթիլաներարկման լուծույթներ նույն քանակությամբ՝ տարեկան մոտ 5.000.000 հատ: Այն ներարկման համար նախատեսված լուծույթներ են, որոնց բաղադրության մեջ մտնում են ակտիվ դեղաբանական նյութեր: Լուծույթների պատրաստման տեխնոլոգիական գծապատկերը հետևյալն է. հումքերի և օժանդակ նյութերի կշռումից հետո, դրանք տեղափոխվում են դեղապատրաստման համար նախատեսված տարայի մեջ, խառնվում ներարկման ջրի հետ, այնուհետև լուծույթը ֆիլտրվում է, լցվում ԴՎՔ փաթեթների մեջ, և տեղափոխվում դեպի մանրէազերծման կայան, ապա մանրէազերծվելուց և սառեցվելուց հետո անցնում է տեսողական վերահսկում, մակնիշավորվում և պիտակավորվում, ապա վերջնական փաթեթավորվում, այնուհետև ուղղորդվում կարանտինային պահեստ:
- Ակնակաթիլներ և ներարկման լուծույթներ - ձեռնարկությունը շարունակելու է արտադրել ներարկման լուծույթներ և ակնակաթիլներ, ներկա 2 000 000-ի փոխարեն մոտ 4.000.000 հատ տարեկան: Դրանք իրենցից ներկայացնում են ստերիլ դեղամիջոցներ, որոնց բաղադրության մեջ մտնում են ակտիվ դեղաբանական նյութեր: Լուծույթների պատրաստման տեխնոլոգիական գծապատկերը հետևյալն է. հումքերի և օժանդակ նյութերի կշռումից հետո, դրանք տեղափոխվում են դեղապատրաստման համար նախատեսված տարաների մեջ, խառնվում ներարկման ջրի հետ, այնուհետև լուծույթները ֆիլտրվում են վերջնական տարայի մեջ և տեղափոխվում դեղալցման

հոսքագիծ՝ լցվում առաջնային փաթեթավորման մեջ, տեղափոխվում դեպի մանրէագերծման կայան, հաջորդ օրը անցնում տեսողական վերահսկում, մակնիշավորում և պիտակավորվում, ապա վերջնական փաթեթավորվում և ուղղորդվում կարանտինային պահեստ:

Պատրաստի արտադրանքը փաթեթավորվում է պոլիէթիլենով և/կամ ստվարաթղթով: Ընկերությունը դեղագործական գործունեության հետ կապ չունեցող այլ արտադրական գործունեություն չի իրականացնում:

10.4 Ջրամատակարարում

Ստերիլ հեղուկ դեղամիջոցների արտադրությունում ջուրն օգտագործվում է լուծույթների պատրաստման, սարքավորումների սառեցման, տեխնոլոգիական տարաների լվացման, սպասարկող անձնակազմի տնտեսա-կենցաղային կարիքների, բաց տարածքների ջրցանման, կանաչ տարածքների ոռոգման համար:

Խմելու ջուր ձեռնարկությունը ստանում է՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն (Հավելված 4):

Խմելու ջրատարն ունի $d=600$ մմ տրամագիծ: Ջրմուղի մուտքագիծը նախատեսված է $d=80$ մմ խողովակաշարով:

Դեղապատրաստման, ինչպես նաև ապակյա շիկների, խցանների և կափարիչների լվացումն իրականացվում է թորման եղանակով ստացված ներարկման ջրով, որը ստացվում է արտադրությունում տեղադրված ներարկման ջրի ստացման սարքավորման միջոցով: Ներարկման ջուրը հավաքվում է $V=3000$ լ տարողությամբ տարայում և բաշխվում օգտագործման կետերին՝ շրջանառու պոմպի միջոցով: Արտադրությունում ներարկման ջուր ստանալու համար օգտագործվում է մաքրագատված ջուր, որի ստացման, պահպանման և բաշխման համակարգի բոլոր այն մակերեսները, որոնք անմիջական շփում ունեն մաքրագատված ջրի հետ, պատրաստված են 316L մակնիշի, չժանգոտվող պողպատից:

Թարմ խմելու ջուրը ծախսվում է նաև աշխատողների խմելու-կենցաղային կարիքների համար (խմելու կարիքներ, ճաշարան, ցնցուղարաններ, լվացքատուն): Խմելու որակի ջուրը որոշ քանակով օգտագործվում է նաև հատակների լվացման նպատակով, ինչպես նաև օժանդակ արտադրամասերի և լաբորատորիաների կարիքների համար:

10.5 Ջրահեռացում

Ստերիլ հեղուկ դեղամիջոցների արտադրությունում կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ տեղի չի ունենում:

Բոլոր արտադրամասերից արտադրական և կենցաղային կեղտաջրերը միացյալ տնտեսա-կենցաղային-արտադրական կոյուղու ցանցով հեռացվում են Երևան քաղաքի Քոչինյան փողոցով անցնող $d=300$ մմ կոյուղի և հետագայում մաքրվում քաղաքային մաքրման կայանում:

Համաձայն կատարված հաշվարկների՝ քաղաքային կոյուղու կոլեկտոր ուղղվող տնտեսա-կենցաղային կեղտաջրերի բաղադրությունն ամբողջությամբ համապատասխանում է «Ալբացիա»-ի կայան մուտք գործող կեղտաջրերի համար ՀՀ-ում ընդունված աղտոտող նյութերի նորմատիվ պահանջներին:

Այսպիսով ստերիլ հեղուկ դեղամիջոցների գործարանից արտադրական և տնտեսա-կենցաղային հոսքաջրերի արտահոսքն իրականացվում է 1 թողարկով՝ տնտեսակենցաղային-արտադրական կոյուղու համակարգով: Կոյուղու կոլեկտոր ուղղվող կեղտաջրերի ժամային ծախսը կազմում է $3,35$ մ³/ժամ:

Գործարանի կոյուղու ցանց ուղղվող 6213,9մ³/տարի հոսքաջրերում մոտ 82%-ը կազմում են արտադրական հոսքաջրերը (5095,4մ³/տարի): Մնացածը կենցաղային հոսքաջրեր են՝ 1118,5 մ³/տարի, 18%:

Ձեռնարկությունն աշխատում է տարեկան 275 օր՝ օրը 8 ժամ:

Անձրևաջրերը տարածքից հեռացվում են ինքնահոս դեպի կոյուղու ցանց:

10.6 Էլեկտրամատակարարում

Ձեռնարկության էլեկտրամատակարարումը կատարվում համաձայն՝ «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ին «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, ինչպես նաև «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի միջև կնքված էլեկտրամատակարարման պայմանագրի: Էլեկտրական ցանցին միացումը կատարվում է «Ջրվեժ» 110/35/10կվ ե/կ-ի 10կվ ԲՄ-ի I և II սեկցիանների առանձին բջիջներից: Տեղադրված է 1000ԿՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան(Հավելված 3):

Վերազինումից հետո ընկերության էլեկտրամատակարարումը ևս կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի միջև կնքված էլեկտրամատակարարման պայմանագրի՝ ծախսած էլեկտրաէներգիայի համար սահմանված վճարների հիման վրա:

10.7 Գազամատակարարում

Իրականացվում է «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի միջև կնքված՝ բնական գազի մատակարարման պայմանագրի համաձայն (Հավելված 5):

Այլընտրանքային պահուստային վառելիք չի նախատեսված:

10.8 Ջերմամատակարարում

Իրականացվում է գործարանում առկա կաթսայատնից՝ տաք ջրի մատակարարման միջոցով: Կաթսայատունն ապահովում է 60-85⁰С պարամետրերով տաք ջուր: Գործարանի ջեռուցումն իրականացվում է այլումինե ջեռուցիչ մարտկոցներով:

10.9 Հովացման համակարգ

Գործարանի սառնամատակարարումը կատարվում է շենքի տանիքում տեղադրված սառեցման ագրեգատի միջոցով, որն ապահովում է 7-12⁰С՝ ջուր-ջերմատար պարամետրերով:

10.10 Օդափոխություն

Գործարանն ապահովված է օդի ներածման և արտածման մեխանիկական համակարգերով՝ արտադրամասում և օժանդակ տարածքներում օդափոխության կարգավորման նպատակով: Օդի արտածումը կատարվում է ԱՀ-1 համակարգով՝ կանալային օդամուղի միջոցով: Սարքավորումների տարածքի օդի ներածումն իրականացվում է ՆՀ-1 համակարգով՝ կանալային ներածման ագրեգատի միջոցով: Օդի արտածումը կատարվում է ԱՀ-2 համակարգով՝ կանալային օդամուղի միջոցով: Նետրալիզացիայի սենյակի օդի արտածումը՝ ԱՀ-3, հանդերձարաններինը՝ ՆՀ-2 համակարգերով, կանալային օդամուղիների միջոցով: Օդի արտածումը՝ ԱՀ-4,5 համակարգով: +5,50 նիշի պահեստի սառնամատակարարումը համատեղված է օդափոխությամբ իրականացվում է Կ-2 համակարգով, կանալային կոնդիցիոների միջոցով, օդի արտածում՝ ԱՀ-7, փաթեթավորման տարածքինը՝ ԱՀ-6 համակարգերով, կանալային օդամուղի միջոցով: +5,50 և 9,40 նիշերի լաբորատորիաների ներածումը՝ Կ-4 համակարգով, կանալային կոնդիցիոների միջոցով, օդի արտածումը՝ ԱՀ-8,11 համակարգով, կանալային օդամուղիների միջոցով: Դահլիճի օդի ներածումը՝ Կ-5, օդի արտածումը՝ ԱՀ-14, ճաշարանը՝ ՆՀ-3, օդի արտածումը՝ ԱՀ-16, վարչական սենյակները՝ Կ-6, օդի արտածումը՝ ԱՀ-13, խոհանոցի օդի

ներածումը՝ ՆՀ-5, օդի արտածումը՝ ԱՀ-15 համակարգերով: Սարքավորումների տարածքի օդի ներածումը կատարվում է ՆՀ-4 համակարգով, կանալային ներածման ագրեգատի միջոցով, օդի արտածումը՝ ԱՀ-12 համակարգով, կանալային օդամուղի միջոցով: Բոլոր կանալային օդամուղիները տեղադրված են տանիքում, մասամբ՝ առաստաղի տակ:

Ընկերության օդափոխության համակարգը նախագծված և համալրված է համաձայն գործող Եվրոպական ՊԱԳ պահանջների՝ Clima Tech ընկերության սարքավորումներով: Օդափոխության համակարգը բաղկացած է 10 ներածման/արտածման միավորներից՝ սարքերից: Յուրաքանչյուր միավոր բաղկացած է NT7 և NT9 ֆիլտրերով, որոնք նախատեսված են խոշոր մասնիկները գտելու համար: Նշված ֆիլտրերով անցած օդը վերջնականապես մաքրվում է անցնելով HEPA H14 կարգի ֆիլտրերով, որոնց արդյունավետությունը կազմում է 99,995%:

Մաքուր սենյակների օդի մատակարարումը, հոսքի արագությունը, ջերմաստիճանը, խոնավությունը վերահսկվում է համակարգչային համակարգի միջոցով:

10.11 Աղբահեռացում

Գործարանի աղբահեռացումը կատարվում է համաձայն՝ Երևանի համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի (Հավելված 6):

Տարածքում տեղադրված է 2 հատ 2x1.5 չափերի աղբաման:

Կենցաղային աղբի տեսակավորման համար առկա է նաև աղբի տեսակավորման աղբամաններ:

11. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը բնական ռեսուրսներից օգտագործում է ջուր և բնական գազ:

Դեղամիջոցների արտադրությունում որպես ելանյութ օգտագործվում է միայն խմելու որակի ջուր՝ մաքրագատված:

Բնական գազն օգտագործվում է գործարանի ջերմամատակարարման, արտադրական գործընթացներում տաք ջրի և գոլորշու ստացման համար: Գործունեության իրականացման ընթացքում գազի առավելագույն ծախսը կազմում է 224,4մ³/ժամ, իսկ վերագինման արդյունքում գազի առավելագույն ժամային ծախսը փոփոխության չի ենթարկվի: Գազի ծախսի ավելացումը փոփոխություն է առաջացնում միայն տ/տարի ցուցանիշում, ինչը բացատրվում է տարեկան ավելի շատ աշխատելու պարագայով: Կաթսայատան գազի ծախսը կկազմի 390456մ³ /տարի:

Դեղերի արտադրությունում օգտագործվող նյութերը գնվում են միայն հաստատված մատակարարներից, իսկ հնարավորության դեպքում՝ անմիջապես արտադրողից:

«ԼԻԿՎՈՐ»ՓԲ ընկերությունն իրականացնում է հումքի, նյութի սարքավորումների մատակարարների հետ երկարատև համագործակցության ծրագիր համաձայն՝ պայմանագրի կամ առևտրային համաձայնագրի, ուր սահմանված են գնվող արտադրանքի որակական ցուցանիշների նկատմամբ պահանջներ, մատակարարների գնահատման, նրանց հետ գործարքներ կնքելու և հետագա փոխհարաբերություններ հաստատելու, պատվիրատուի և կատարողի պարտավորությունների բաշխման կարգը: Ձեռք բերվող ապրանքները ենթարկվում են մուտքային վերահսկողության, համոզվելու նրանց ներկայացվող պահանջների համապատասխանության մեջ:

12. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը. կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մշակել գործունեությանն առնչվող ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմման միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները:

Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, առնչվող օրենսդրական դաշտը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեխնիկական առաջադրանքը: Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան դեղագործական արտադրամասի վերազինման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Գործող դեղագործական գործարանի շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը հիմնականում կապված են՝

- օդային ավազանի վրա ազդեցության՝ պայմանավորված կաթսայատան աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների հետ,
- ջրային ռեսուրսների օգտագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- դեղերի արտադրության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Վերազինման արդյունքում շրջակա միջավայրի վրա որևէ նոր լրացուցիչ ռիսկի առաջացում չի ենթադրվում:


12.1 Օդային ավազան.

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ են արտանետվում տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են վնասակար նյութեր: Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. մայիս ամսվա մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների՝ Երևան քաղաքում մայիս ամսվա օդային ավազանում ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունների ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.12 մգ/մ^3 –ից բարձր (ՄԹԿ միջին՝ 0.15 մգ/մ^3)
- Ազոտի երկօքսիդ(NO_2)՝ 0.03 մգ/մ^3 (ՄԹԿ միջին՝ 0.04 մգ/մ^3)
- Ծծմբի երկօքսիդ(SO_2)՝ 0.02 բարձր, մինչև 0.03 մգ/մ^3 սահմաններում(ՄԹԿ միջին՝ 0.05 մգ/մ^3):
- Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան մինչև 0.01 մգ/մ^3 (ՄԹԿ միջին՝ 0.03 մգ/մ^3):

Երևան քաղաքում 2022թ. մայիս ամսվա դրությամբ մթնոլորտային օդի աղտոտվածության ցուցանիշները չեն գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Համաձայն նույն կայք էջի՝ հուլիսի 7-13-ն ընկած ժամանակաշրջանում փոշու պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան՝ Կենտրոն վարչական շրջանում, Շենգավիթում՝ հուլիսի 8-ին, 11-13-ը, Արաբկիրում՝ հուլիսի 9-13-ը, Նոր Նորքում՝ հուլիսի 7-ին, 8-ին, 10-ին և 11-ին: Հունիսի վերջին շաբաթում ազոտի երկօքսիդի քանակը օդային ավազանում գերազանցել է ՄԹԿ նորմերը:



Դեղամիջոցների արտադրության գործարանի աշխատելու ընթացքում լինում են օդային ավազան արտանետումներ 1 աղբյուրից՝ կաթսայատան գազի այրման արդյունքում: Կաթսայի արտադրողականությունը 3000կգ շոգի/ժամ: Պահեստային վառելիք նախատեսված չէ: Վնասակար նյութերը մթնոլորտ են արտանետվում գոյություն ունեցող մեկ արտանետման աղբյուրից՝ $d=0.41$ մ, $H=15$ մ ծխնելույզով:

Կաթսայատան գազի առավելագույն ծախսը կազմում է $224,4 \text{մ}^3/\text{ժամ}$: Վերազինման արդյունքում գազի առավելագույն ժամային ծախսը փոփոխության չի ենթարկվի: Գազի ծախսի ավելացումը փոփոխություն է առաջացնում միայն տ/տարի ցուցանիշում, ինչը բացատրվում է տարեկան ավելի շատ աշխատելու պարագայով: Արտադրության ընդլայնման հետ կապված գազի ծախսի տարեկան պահանջարկը կավելանա 20%-ով: Կաթսայատունը կաշխատի տարեկան 1740ժամ (ամռանը 4 ժամ, ձմռանը՝ 6 ժամ) գրաֆիկով, որի արդյունքում գազի տարեկան ծախսը կկազմի $390\,456 \text{մ}^3/\text{տարի}$:

Համաձայն վերազինման արդյունքում կատարված հաշվարկների՝ օդային ավազան ածխածնի օքսիդի արտանետումները կկազմեն 0,39տ/տարի, 0,063գ/վրկ, ազոտի օքսիդներինը՝ 0,915տ/տարի, 0,146գ/վրկ: Հաշվարկները կատարվել են ՀՀ բնապահպանության նախարարի 23 հոկտեմբերի 2012թ. N 268-Ա հրամանով հաստատված մեթոդիկայի համաձայն:

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը			Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակական բնութագրերը համաձայն 2014թ. (ՄԹԱ) նախագծի		Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակական բնութագրերը վերագինման արդյունքում	
Նյութի անվանումը	ՄԹ-Խ առավելագույն միանվագ մգ/մ ³	Վտանգավորության դասը	Արտանետումները տ/տարի	Արտանետումները գ/վրկ	Արտանետումները տ/տարի	Արտանետումները գ/վրկ
Ազոտի օքսիդներ/երկօքսիդի հաշվարկով/	0,2	3	0,27	0.16	0,915	0,146
Ածխածնի օքսիդ	5	4	0.87	0.52	0,39	0,063

* Արտանետումների հաշվարկը կատարվում է առավելագույն՝ գ/վրկ ցուցանիշով: Գ/վրկ ցուցանիշի փոփոխությունը սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նախագծի համեմատ պայմանավորված է հաշվարկման մեթոդիկայի փոփոխությամբ, տ/տարի ցուցանիշի փոփոխությունը պայմանավորված է գազի ծախսի 20% ավելացմամբ և հաշվարկային մեթոդիկայի փոփոխությամբ:

Հեղուկ ստերիլ դեղերի արտադրության տեխնոլոգիական գործընթացի ժամանակ լինում է նաև մթնոլորտ արտանետումներ մաքուր գոլորշու տեսքով:

Հեղուկ ստերիլ դեղամիջոցների պատրաստման ժամանակ այլ վտանգավոր արտանետումներ չեն լինում, կամ շատ աննշան են, քանի որ դրանք հեղուկ դեղաձևեր են և պատրաստման տարաները օգտագործվում են փակ իզոլացնող համակարգով՝ դեղորայքները ստերիլ լինելու պատճառով: Գոլորշին ստացվում է ներարկման ջրից մաքուր գոլորշու գեներատորի միջոցով: Մաքուր գոլորշին և իրենից ստացվող կոնդենսատը պարբերաբար ստուգվում են ընկերությունում, ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ նրա քիմիական բաղադրության մեջ ջրի մոլեկուլներից բացի այլ նյութեր չկան, կամ հազվադեպ կարող են լինել որոշակի աննշան նյութեր:

Արտադրական գոլորշու տեսքով մթնոլորտային արտանետումները շատ աննշան լինելու պատճառով կոնցենտրացիաները չեն հաշվարկվել:

Արտադրական գոլորշու տեսքով մթնոլորտային արտանետումները.

Աղյուսակ 12

N	Վնասակար նյութերի անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի տարեկան քանակը, տ/տարի
1	2	3
1	Նատրիումի քլորիդ	$34,65 \cdot 10^{-9}$
2	Կալիումի քլորիդ	$27,7 \cdot 10^{-10}$
3	Կալցիումի քլորիդ	$25,7 \cdot 10^{-10}$
4	Մագնեզիումի քլորիդ	$31,7 \cdot 10^{-12}$

5	Նատրիումի հիդրօքսիդ	$178,2 \cdot 10^{-11}$
6	Լիդոկաինի հիդրոքլորիդ	$9,44 \cdot 10^{-7}$
7	Տաուրին	$18 \cdot 10^{-7}$
8	Բենզալկոնիումի քլորիդ	$5,9 \cdot 10^{-9}$

Մթնոլորտ արտանետումների վնասակար նյութերի քանակը և վնասակար արտանետումների գետնամերձ կոնցենտրացիաները ՍԹ-Կ մասով ստանալու համար կատարվել է ցրման հաշվարկ՝ Էկոլոգ 4.6 ծրագրով (Հավելված 11):

Համեմատվել են նախկինում ՍԹ-Ա նախագծի (Ռադուգա ծրագրով արված) և վերագինման ՇՄԱԳ-ի շրջանակներում (Էկոլոգ 4. 6 համակարգչային ծրագրով) հաշվարկված օդային ավազան արտանետվող վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաները:

Աղյուսակ 13

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան, ՍԹ-Կ մասով 2014թ. ՍԹ-Ա նախագիծ(մգ/մ ³) (Ռադուգա)		Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան, ՍԹ-Կ մասով վերագինման արդյունքում ՇՄԱԳ (մգ/մ ³) (Ուլարգա Էկոլոգ 4. 6)	
ազոտի օքսիդներ	0,1		0,125	
ածխածնի օքսիդ	0,013		Ցածր լինելու պատճառով հաշվարկում չի նշվել:	

Համաձայն կատարված հաշվարկների՝ ածխածնի օքսիդի առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան՝ ՍԹ-Կ մասով, նոր ծրագրով հաշվարկի դեպքում բավականին փոքր է 2014թ. ՍԹ-Ա նախագծի հաշվարկներից, ազոտի օքսիդի դեպքում գրեթե հավասար:

Այսպիսով ՇՄԱԳ-ի շրջանակներում կատարված հաշվարկների համաձայն՝ օդային ավազանի գետնամերձ շերտի կոնցենտրացիաների ավելացում չի ապաստում:

Քամու վտանգավոր արագությունը մ/վրկ-ով, (ցուցանիշը տրամադրվել է «Հիդրոտեխնիկական ծախսերի և մոնիթորինգ կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ Հավելված 10):

12.2 Չրային ռեսուրսներ.

Դեղամիջոցների արտադրությունում որպես ելանյութ օգտագործվում է միայն խմելու որակի ջուր՝ մաքրագատված: Խմելու ջուրն անցնում է ածխային, ավազային ֆիլտրերով, իոնա-փոխանակիչ աշտարակներով, 5մկմ ֆիլտրով, այնուհետև անցնում է 2 փուլ հակադարձ օսմոտիկ մեմբրաններով և վերջում՝ էլեկտրոդեիոնիզատորով:

Դեղամիջոցների արտադրության ձեռնարկությունում ջուրն օգտագործվում է.

- արտադրական կարիքների՝ ներարկման և թորած ջրի ստացման, այդ ջրերից լուծույթների պատրաստման, դեղի բաղադրության մեջ մտնող և սարքավորումների լվացման, սառեցման համար:
- Օժանդակ կարիքների՝ կաթսայատան ծախսված ջրի, օժանդակ տարածքների և որակի վերահսկման լաբորատորիաների կարիքների, տեխնոլոգիական տարաների և սարքերի լվացման համար:

- Տնտեսա-կենցաղային՝ ջուրն օգտագործվում է սպասարկող անձնակազմի տնտեսա-կենցաղային կարիքների, հատակների լվացման, բաց տարածքների ջրցանման, ռոռզման համար:

Ընկերությունը տարածքի հատակների լվացման, ջրցանման և ռոռզման համար չի օգտագործում տեխնիկական ջուր, ելնելով արտադրական միջավայրի և տարածքի ստերիլությունն ապահովելու անհրաժեշտությունից, քանի որ պատշաճ և արյան փոխներարկման համակարգում օգտագործվող ստերիլ դեղերի արտադրություն ապահովելու համար ցանկալի չէ ավելի «կեղտոտ» ջրի օգտագործումը՝ մանրէներով և սնկերով աղտոտումից խուսափելու նպատակով:

Արտադրությունում կատարվող ջրի փաստացի ծախսը կազմում է 18729,13մ³:

Վերազինման արդյունքում դեղերի արտադրության գործընթացում՝ պատրաստի արտադրանքի մեջ ջրի ծավալը կազմում է 90%: Արտադրվող արտադրանքը կազմում է 4668000լիտր, որի մեջ անվերադարձ օգտագործվող ջուրը կկազմի.

$$W_{արտ} = 4668000 \times 0.9 = 4201200 \text{ արտ/տարի} = 4201 \text{ տ/տարի}:$$

Ընկերության ջրի ընդհանուր ծախսը (խմելու-տնտեսական, օժանդակ, տեխնոլոգիական կարիքների համար) կավելանա նախկինի համեմատ 20-25%-ով և կկազմի 23500 մ³/տարի ջուր:

Արտադրական գործընթացում օգտագործվող ջրի քանակն ըստ կարիքների.

- տնտեսա-կենցաղային կարիքների համար՝ ծախսվում է 3967մ³/տարի ջուր,
- օժանդակ կարիքների համար՝ 6068 մ³/տարի ջուր,
- արտադրական և տեխնոլոգիական կարիքների համար՝ 13465 մ³/տարի ջուր,

Լաբորատորիաների համար ջրի տարեկան ծախսը.

$$W_{լաբ} = 414,5 \times 275 = 114 \text{ մ}^3/\text{տարի}$$

414,5 – լաբորատորիաների օրական ջրի ծախսն է լիտրով,

275 – աշխատանքային օրերի քանակը տարվա ընթացքում:

Ընկերության օժանդակ կարիքների համար ջրի ընդհանուր ծախսը կկազմի՝

$$W_{od} = 5642 + 312 + 114 = 6068 \text{ մ}^3/\text{տարի}$$

Տնտեսական-խմելու կարիքների համար ջրի ծախսը.

$$W_{տնտ.} = n_1 + n_2 + n_3 + n_4 + n_5 + n_6 + n_7, \text{ որտեղ } n_1 \text{ համապատասխանաբար } \cdot$$

$n_1, n_2, n_3, n_4, n_5, n_6, n_7$ - ջրի ծախսերն են՝ խմելու/տնտեսական կարիքներ, ճաշարան, հանդերձանքի լվացում, ցնցուղարաններ, կանաչ տարածքի ռոռզում, տարածքների լվացում և մաքրում, ասֆալտապատ տարածքի մաքրում:

$$W_{տնտ.} = 126.8 + 190.3 + 174.2 + 348.4 + 1121.3 + 1750 + 256 = 3967 \text{ մ}^3/\text{տարի}$$

Տեխնոլոգիական կարիքների համար ջրի ծախսը.

$$W_{տեխ.} = n_1 + n_2 + n_3 \text{ որտեղ } n_1, n_2, n_3 \text{ համապատասխանաբար } \cdot$$

n_1, n_2, n_3 ջրի ծախսերն են՝ դեղերի արտադրության, սարքավորումների լվացման և

մանրէագործման կայանների համար:

$$W_{\text{տեխ.}} = 6827 + 3393 + 3245 = 13465 \text{ մ}^3/\text{տարի}$$

Ընկերության ընդհանուր ջրածախսը կկազմի 23500 մ³/տարի ջուր:

$$W_{\text{ձեռ.}} = W_{\text{տեխ.}} + W_{\text{օդ}} + W_{\text{լավ. տնտ.}} = 13465 + 6068 + 3967 = 23500 \text{ մ}^3/\text{տարի}:$$

Ընկերության ջրօգտագործման և ջրահեռացման քանակները որոշվել են համապատասխան հաշվարկներով, ելնելով նորմատիվային պահանջներից և փաստացի ծախսից:

Կեղտաջրեր. Ներկա փուլում դեղամիջոցների արտադրության գործընթացում առաջանում են 5681,32 մ³/տարի քանակով կեղտաջրեր՝ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2014թ. հաստատված ջրամատակարարման և ջրահեռացման անհատական նորմերի:

Դեղամիջոցների արտադրության վերազինման գործընթացում կառաջանան հոսքաջրեր՝ 6213,9 մ³/տարի ծավալով, որից.

- արտադրական – 5095,4 մ³/տարի, հոսքաջրերի 82%-ը,
- տնտեսա-կենցաղային-1118,5-մ³/տարի հոսքաջրերի 18%-ը:

Արտադրական հոսքաջրերն առաջանում են դեղերի արտադրությունից, օժանդակ կարիքներից (ջրի պատրաստման արտադրամաս) լաբորատորիաների, տեխնոլոգիական սարքավորումների լվացումից: Հոսքաջրերը աղտոտված են կախյալ մասնիկներով, մակերևութաակտիվ նյութերով, քլորիդներով, չնչին քանակությամբ՝ այլ աղային նյութերի առկայությամբ:

Ընկերության ջրահեռացման քանակները որոշվում են հաշվի առնելով ջրի անվերադարձ կորուստները:

$$W_{\text{ջ հեռ}} = W_{\text{օգ}} - (W_{\text{կ}} + W_{\text{ակ}}), \text{ որտեղ՝}$$

$W_{\text{օգ}}$ - ջրօգտագործման ծավալն է

$W_{\text{կ}}$ - ջրօգտագործման կորուստներն են

$W_{\text{ակ}}$ - ջրի անվերադարձ կորուստներն են

Ջրօգտագործման ծավալն՝ 23500 մ³/տարի:

Կորուստները կազմում են՝ 1121,3+256+5642+312+4201+3245=14777.3 մ³/տարի:

Անվերադարձ կորուստները՝ 36,8+1167+1305=2508,8 մ³/տարի


Ընդհանուր ջրահեռացումը կկազմի՝

$$90 + 190,3 + 174,2 + 348,4 + 583 + 114 + 2626 + 2088 = 6213,9 \text{ մ}^3/\text{տարի}:$$

Այս քանակի հոսքաջուրն ուղղվում է քաղաքային կոյուղի:

Նկ.3 Զրոգուագործման և ջրահեռացման հաշվեկշիռի սխեման, մ³/տարի

Խմելու ջրակմի ջուր Երևան քաղաքի խմելու տնտեսական շրջանում կառավարման կողմից 23500



Վերազինման արդյունքում կեղտաջրերի որակական փոփոխություններ չեն առաջանալու:

Արտադրական կեղտաջրերի հաշվարկային բաղադրությունը

Աղյուսակ 14

Աղտոտող բաղադրիչի անվանումը	Կոնցենտրացիա, գ/մ ³			
	Դեղերի արտադրությո- ւն 4201 մ ³	Սարքավո- րումների վաճուճ 2088 մ ³	Լարորա- տորիաներ 114մ ³	Արտադրա- կան հոսքաջրերի միջին բաղադրու- թյունը
ԹՔՊ	5	15	50	15
ԹԿՊ	-	6,0	12	3,87
Կախված նյութեր	100	2,0	80	60,2
Սուլֆատ-իոն	350	44	120	203
Քլորիդ-իոն	250	1,7	140	141
Երկաթ ընդ.	0,02	0,03	0,03	0,025
Կալցիում	110	0,01	25	57
Մագնեզիում	18,3	0,05	20	11,6
Ազոտ ամոնիակային	13,4	-	2,0	6,8
Նիտրիտ-իոն	0,03	հետքեր	0,8	0,12
Նիտրատ-իոն	0,8		40,0	5,72
Ֆոսֆատ-իոն	0,6	-II-	1,5	0,5
Մակերևույթաակտի- վ նյութեր	-	-II-	10	1,3
Պոլիվինիլ պիրոլիդոն	-	0,0086	-	0,003
Լիդոկաինի հիդրոքլորիդ	-	0,0026	-	0,00098
Տաուրին	-	0,0046	-	0,0017
Բենզալկոնիումի քլորիդ	-	0,000012	-	0,0000046

Ցուցանիշի անվանումը	Պարունակությունը, գ/մ ³	
	Մատուցվող թարմ ջուր	Կենցաղային կեղտաջրեր
Թ-ՔՊ	5.0	360
Թ-ԿՊլրիվ	Բացակայում է	240
Կախված նյութեր	2.0	215
Նավթամթերք	Բացակայում է	Բացակայում է
Ցուղեր	Բացակայում է	40.0
Սուլֆատներ	44.0	44.0
Քորիդներ	1.7	50.0
Երկաթ ընդհանուր	0.01	0.02
Կալցիում	0.5	0.5
Մագնեզիում	10.0	10.0
Ազոտ ամոնիակային	Բացակայում է	20.0
Նիտրիտներ	Բացակայում է	0.08
Նիտրատներ	0.02	2.5
Ֆոսֆատներ	Բացակայում է	0.2
Լվացող սինթետիկ նյութեր	Բացակայում է	6.5

Ընկերությունն արտադրում է ստերիլ դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են արյան փոխներարկման համակարգում ուստի ընկերության հոսքաջրերը չեն պարունակում Առողջապահության նախարարի 29 հոկտեմբերի 2009թ. N20-Ն հրամանով սահմանված քիմիական և կենսաբանական ծագման վտանգավոր թափոններ:

Արտադրական հոսքաջրերը նոսրացվում են 1:100 հարաբերությամբ ներարկման և խմելու ջրերով ամեն օր, սարքերը լվանալու և մանրէազերծելու ժամանակ մաքուր գոլորշիով, ապա նոր գնում են ընդհանուր կոյուղի՝ համաձայն դեղագործական նորմերի: Կեղտաջրերի հեռացման լուծումը լիովին համապատասխանում է «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 Սանիտարական կանոնները և նորմեր; 30. Դեղագործական թափոններ 2008 թ. մարտի 4-ի Հ Ր Ա Մ Ա Ն N 03-Ն-ի պահանջներին և պայմաններին, որտեղ որպես կեղտաջրերի հեռացման այլընտրանք դիտարկվում է. «Հարաբերականորեն մեղմ հեղուկ կամ կիսահեղուկ դեղագործական նյութերի միջին քանակություններին, ինչպես օրինակ վիտամինի լուծույթները, հազի օշարակները, աչքի կաթիլները, աղային լուծույթները, ներերակային հեղուկները և այլն: Ընդունված է արտանետել այս հեղուկ դեղերը կոյուղի՝ նախօրոք լուծելով ջրի մեծ քանակության մեջ»: Ուստի հոսքաջրերի քիմիական և կենսաբանական մաքրում չի նախատեսվում, կենսաբանական մաքրման կայանի տեղադրման անհրաժեշտություն չկա:

	Աղտոտող նյութի անվանումը	ՇՖ, գ/մ ³	Փաստացի արտահոսք գ/ժամ	ՇԹՍԱ գ/մ ³	ԹՍԱ գ/ժամ	Գեր. ան- գամ
1	ԹՔՊ	198	663,3	198	663,3	-
2	ԹԿՊ	128	428,8	128	428,8	-
3	Կախված նյութեր	142	475,7	142	475,7	-
4	Սուլֆատ – իոն	118	395,3	118	395,3	-
5	Քլորիդ-իոն	92,8	310,88	92,8	310,88	-
6	Ֆոսֆատ-իոն	0,34	1,14	0,34	1,14	-
7	Նիտրատ-իոն	4,0	13,4	4,0	13,4	-
8	Ազոտ ամոնիակային	13,8	46,23	13,8	46,23	-
9	Նիտրիտ-իոն	0,1	0,335	0,1	0,335	-
10	Պոլիվինիլ պիրոլիդոն	0,0014	0,05	0,0014	0,05	-
11	Երկաթ	0,022	0,074	0,022	0,074	-
12	Լիդոկաինի հիդրոքլորիդ	0,0046	0,0015	0,00046	0,0015	-
13	Տաուրին	0,00079	0,0026	0,00079	0,0026	-
14	Կալցիում	27	90,45	27	90,45	-
15	Մագնեզիում	10,75	36,01	10,75	36,01	-
16	Լվացող սինթետիկ նյութեր	4,05	13,6	4,05	13,6	-
17	Ճարպեր (յուղեր)	21,2	71,02	21,2	71,02	-
18	Բենզակլոնիումի քլորիդ	0,000002	0,0000067	0,000002	0,0000067	-

Կոյուղու կոլեկտոր ուղղվող արտադրական կեղտաջրերի որակական բաղադրությունը սահմանվում է կեղտաջրերի որակի և քանակի ցուցանիշների թույլատրելի արժեքներով (ՍԹԱ): Վերազինման արդյունքում հոսքաջրերը որակական փոփոխություններ չեն կրում, կեղտաջրերի կոյուղու կոլեկտոր թափվող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտահոսքի (ԹՍԱ) նորմաներն են.

Հ/հ	Աղտոտող նյութի անվանումը	Պարունակությունը, գ/մ ³	
		Գործարանի կեղտաջրեր	Նորմատիվ արժեքն աերացիայի կայան մուտք գործող կեղտաջրերում
1	pH	7,5	6,5-9,0
2	ԹՔՊ	198	360
3	ԹԿՊ	128	240
4	Կախված նյութեր	142	215
5	Սուլֆատ – իոն	118	300
6	Քլորիդ-իոն	92,8	350
7	Ֆոսֆատ-իոն	0,34	20
8	Նիտրատ-իոն	4,0	15-20
9	Ազոտ ամոնիակային	13,8	45
10	Նիտրիտ-իոն	0,1	-
11	Պղինձի պիրոլիդոն	0,0014	0,5 ՄԹԿ (0,05)
12	Երկաթ	0,022	5,0
13	Լիդոկաինի հիդրոքլորիդ	0,00046	1 ՄԹԿ (0,005)
14	Տաուրին	0,00079	0,01 ՄԹԿ (0,0001)
15	Կալցիում	27	-
16	Մագնեզիում	10,75	30
17	Լվացող սինթետիկ նյութեր	4,05	20
18	Ճարպեր (յուղեր)	21,2	50
19	Բենզալկոնիոմի քլորիդ	0,000002	0,001 ՄԹԿ (0,00005)

Հեռացվող կեղտաջրերի որակական կազմը համապատասխանում է «Աերացիա» մաքրման կայան մուտք գործող կեղտաջրերի ՀՀ-ում սահմանված նորմերին՝ սահմանված թույլատրելի կոնցենտրացիաներին:

Ձեռնարկությունում տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են մեկ թողարկով՝ կոյուղու համակարգի միջոցով:

Արտադրական տարածքում բացակայում են այլ ջրային ռեսուրսները, ուստի դեղերի արտադրության ընթացքում կեղտաջրերի արտահոսք ջրային ռեսուրսներ տեղի չի ունենում, հետևաբար ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չկա:

12.3 Հողային ռեսուրսներ.

Արտադրամասի վերազինումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գործարանի տարածքում, որը երկար տարիներ գտնվում է մարդածին ազդեցության գոտում: Գործունեության իրականացման վայրը բարեկարգված և ասֆալտապատված է:

Արտադրական տարածքը և թափոնների պահպանման վայրերը բետոնապատված են:

Դեղերի արտադրամասում տեղադրված հոսքագիծն աշխատում է փակ համակարգով՝ հատուկ նախատեսված «Մաքուր սենյակներում», ուստի հողային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հնարավոր ներթափանցումը բացառված է:

Վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն օտարվելու և նոր հողային ռեսուրսների խախտում կամ աղտոտում չի կատարվելու, հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի

լինելու, հետևաբար վերջիններիս վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

12.4 Կենսաբազմազանություն.

Գործունեությունն իրականացվում է արդեն գոյություն ունեցող արտադրական տարածքում, որտեղ կատարված են ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքեր: Հարակից տարածքները գտնվում են մարդածին ազդեցության գոտում՝ խիտ կառուցապատված են, ուստի բացակայում է բուսական և կենդանական աշխարհը, կենդանիների բնադրավայրերը:

Վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն ներգրավվելու, ծառահատումներ չեն կատարվելու, կենսաբազմազանության վրա ազդեցություն չի լինելու, հետևաբար վերջիններիս վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

12.5 Թափոններ.

Գործունեության իրականացման ընթացքում թափոնների անձնագրեր չեն կազմվել: Ներկա փուլում թափոնների քանակական ցուցանիշները գնահատվել են ըստ փաստացի գործունեության՝ 0,367տ/տարի:

Վերազինման արդյունքում թափոնների տեսակային կազմի փոփոխություն չի առաջանալու, իսկ թափոնների քանակն ավելանալու է մոտ 30%-ով:

Համաձայն ՇՄ նախարարության կողմից 12.04.2022թ. հաստատված «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի թափոնների անձնագրերի՝ գործունեության վերազինման ընթացքում կառաջանան թափոնների հետևյալ տեսակները և քանակները.

Աղյուսակ 18

հհ	Թափոնի անվանումը	Թափոնի ծածակագիրը	Թափոնի դասը	Թափոնի քանակը
1	Ժամկետանց ռետկտիվներ	5930040001013	3-րդ	մինչև 0.005 տ/տարի
2	Այլ լաբորատոր թափոններ և քիմիական նյութերի մնացորդներ	5930190001014	4-րդ	մինչև 0.2 տ/տարի
3	Փչացած կամ օգտագործված դեղագործական տարաներ	9703060013013	3-րդ	մինչև 0.1 տ/տարի
4.	Դեղագործական պատրաստուկների օգտագործման համար ոչ պիտանի մնացորդներ և արտադրության կիսաֆաբրիկատներ	5350022213013	3-րդ	մինչև 0.01տ /տարի
5.	Վտանգ ներկայացնող բժշկական թափոններ (վարակիչ)	9701010001053	3-րդ	մինչև 0.01 տ/տարի
6.	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	9120040001004	4-րդ	մինչև 0.2տ/տարի
	Ընդամենը թափոն			Մինչև 0.525տ/տարի

Վերազինման արդյունքում թափոնների ընդհանուր քանակը կկազմի 0,525տ/տարի:

Գործունեության իրականացման հետևանքով առաջացած բժշկական թափոնները վնասագերծվում են այրման վառարանի միջոցով՝ «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի և «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա(Հավելված 7):

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանի՝ ՀՀ տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկի՝ գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3-4-րդ դասերին.

1. Ռեակտիվներ- ընկերությունը ռեակտիվներն օգտագործում է լաբորատոր գործունեությունում:

Ժամկետանց ռեակտիվներն առաջանում են իրենց սպառողական հատկությունները կորցնելուց և օգտագործման ժամկետն անցնելուց:

- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով

* 100% ռեակտիվ է:

Այն Էկոթունավոր է, հրդեհապայթուցանավտանգ չէ, կոռոզիոն հատկությունը՝ ոչ ակտիվ: Թափոնատեսակը համապատասխան պատասխանատու մասնագետի կողմից առանձնացվում, կուտակվում է համապատասխան հերմետիկորեն փակ տարողությունների մեջ և տեղափոխվում օդափոխության համակարգով ապահովված թափոնների պահման հատուկ վայր՝ մինչև ոչնչացման կամ վնասագերծման նպատակով համապատասխան մասնագիտական, լիցենզավորված կազմակերպության հանձնելը:

2. Այլ լաբորատոր թափոններ և քիմիական նյութերի մնացորդներ.-առաջանում է քիմիական և մանրէաբանական փորձաքննությունների իրականացման արդյունքում, ինչպես նաև սպառողական հատկությունների կորստի և օգտագործման ժամկետի անցնելու դեպքում:

- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.

* քիմիական նյութերի մնացորդներ և դեղանյութեր պարունակող անալիզի մնացորդներ՝ 60-80%:

* սննդային միջավայր՝ 10-20%,

* լաբորատոր ամանեղեն՝ 10-20%:

Այն Էկոթունավոր է, դյուրավառ, կոռոզիոն ակտիվությունը՝ ոչ ակտիվ:

Այս թափոնները համապատասխան մասնագետի կողմից առանձնացվում և կուտակվում են համապատասխան մակնշումով՝ դիմացկուն, անթափանց, ամուր կողքերով և հատակով արտահոսք չունեցող մեկանգամյա օգտագործման կարծր, չվնասված տարողությունների մեջ: Լաբորատոր թափոնների ժամանակավոր պահման տարածքն անհրաժեշտ է ապահովել հրդեհամարման պարագաներով և օդափոխության համակարգով: Տարածքը պետք է ախտահանվի պարբերաբար և ապահովված լինի ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով, պատերն ու առաստաղն ունենան անջրաթափանց ծածկույթ, տարածքի դռները ապահովեն բժշկական թափոնների բեռնարկղերն ավտոտրանսպորտի միջոցով տեղափոխելու հնարավորություն: Պետք է բացառվի կենդանիների, այդ թվում՝ միջատների և կրծողների շփումը բժշկական թափոնների հետ: Ժամանակավոր պահման հատուկ տարածք կարող են մուտք գործել միայն բժշկական թափոնը հավաքելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողները:

Փակված տարողությունները կարող են բացվել միայն բժշկական թափոնների վնասագերծման նպատակով:

3. Փչացած կամ օգտագործված դեղագործական տարաներ-գոյանում է դեղանյութերի արտադրությունում, խոնավության կամ աղտոտվածության արդյունքում:

- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * ներարկման շիկներ՝ 10%, բաղադրությունը՝ ապակի,
 - * պլաստիկ շիկներ՝ 5%, բաղադրությունը՝ պոլիէթիլեն,
 - * ՊՎԶ փաթեթներ՝ 75%, բաղադրությունը՝ պոլիվինիլքլորիդ,
 - * Պոլիէթիլենային փաթեթներ՝ 10%, բաղադրությունը՝ պոլիէթիլեն:

Այն էկոթունավոր է, հրդեհավտանգավոր է, կոռոզիոն ակտիվությունը՝ ոչ ակտիվ:

Այս թափոնները համապատասխան մասնագետի կողմից առանձնացվում և կուտակվում են համապատասխան մակնշումով՝ դիմացկուն, անջրաթափանց և ոչ դյուրավառ ամուր հատակով արտահոսք չունեցող կարծր, հերմետիկորեն փակված տարողությունների մեջ: Թափոնների պահման տարածքը պետք է ապահովված լինի հրդեհամարման պարագաներով և օդափոխության համակարգով:

4. Դեղագործական պատրաստուկների օգտագործման համար ոչ պիտանի մնացորդներ և արտադրության կիսաֆաբրիկատներ-գոյանում են դեղագործական արտադրական գործընթացում, տեխնոլոգիական կորուստների կամ խափանումների արդյունքում:

- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * դեղամիջոցներից՝ 10%,
 - * դեղագործական հումք՝ 45%,
 - * օժանդակ հումք՝ 45%:

Այն էկոթունավոր է, հրդեհավտանգ չէ, կոռոզիոն ակտիվությունը՝ ոչ ակտիվ:

Այս թափոնների մեջ են մտնում նաև ժամկետանց դեղերը, որոնք առաջանում են արտադրական գործընթացում և դեղատներից դեղերի հետ վերադարձի արդյունքում՝ 10կգ/տարի քանակով: Վերջնական սպառողական փաթեթավորումով առանձնացվում են ժամանակավոր պահպանման հատուկ տարածքում, մակնիշավորվում՝ «ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԹԱՓՈՆ» պիտակներով:

Այս թափոնները համապատասխան մասնագետի կողմից առանձնացվում և պահվում են համապատասխան մակնշումով փակ տարողությունների կամ կենսաբանական պահարանների մեջ: Թափոնների պահման տարածքը պետք է ապահովված լինի օդափոխության համակարգով:

5. Վտանգ ներկայացնող բժշկական թափոններ (վարակիչ)-առաջանում է լաբորատոր գործունեությունից, ինչպես նաև սպառողական հատկությունների կորստի և օգտագործման ժամկետն անցնելուց:

- Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.
 - * մանրէաբանական թափոններից՝ 35%,
 - * սննդային միջավայրից՝ 25%,
 - * մանրէազերծ ֆիլտրեր՝ 40%:

Այն էկոթունավոր է, հրդեհավտանգ չէ, կոռոզիոն ակտիվությունը՝ ոչ ակտիվ:

Թափոնատեսակն անհրաժեշտ է առանձնացնել բժշկական թափոններից, հավաքել և կուտակել դրանց համար հատուկ «Վարակիչ թափոն» մակնշումով տարողությունների մեջ և հերմետիկորեն փակել: Բժշկական թափոններն ահրաժեշտ է կուտակել դիմացկուն,

անթափանց, ամուր կողքերով և հատակով արտահոսք չունեցող մեկանգամյա օգտագործման կարծր տարողությունների մեջ: Թափոնի հավաքելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը պետք է կրի համապատասխան արտահագուստ, լրացնի պիտակ տվյալ թափոնատեսակի համար՝ նշելով ամսաթիվը և կազմակերպության անունը և տեղափոխի բժշկական թափոնների համար նախատեսված ժամանակավոր պահման հատուկ վայր, որը գերծ է աշխատակիցների գործունեության միջավայրից և ունենա օդափոխության համակարգ:

Ֆիլտրեր. Դեղերի արտադրության տեխնոլոգիական ցիկլում օգտագործվում են ֆիլտրեր, որոնք պարբերաբար փոխվում են: Ֆիլտրերի փոփոխման հաճախականությունը կապված է նրանց ստուգման արդյունքներից: Ֆիլտրերը քիմիական մաքրման չեն ենթարկվում համաձայն՝ դեղագործական ՊԱԳ օրենքների: Օդափոխության համակարգը համալրված է ավտոմատ տվիչներով, որոնց միջոցով վերահսկվում է ֆիլտրերի ամբողջականությունը և խցանվածությունը: Ֆիլտր արտադրողի կողմից տրված ուղեցույցի համաձայն՝ ֆիլտրը շահագործումից հանելուց հետո այն ուտիլիզացվում է որպես սովորական կենցաղային թափոն, քանի որ արտադրողի կողմից տրված ուղեցույցում նրանց ուտիլիզացման վերաբերյալ հատուկ պահանջներ չկան: Ցանկացած անհամապատասխանության դեպքում տվիչներից ստացվում է «ահագանգ» ֆիլտրի վիճակի վերաբերյալ: Ֆիլտրերի փոփոխման հատուկ ժամանակացույց նախատեսված չէ ոչ մի միջազգային ստադարտներով, դրանք փոփոխվում են ըստ անհրաժեշտության և/կամ խցանման:

Վերը նշված արտադրական թափոնների ոչնչացումն իրականացվում է այրման միջոցով՝ համապատասխան լիցենզիա ունեցող ընկերության՝ «Էկոլոգիա Վ. Կ. Հ.» ՍՊԸ-ի կողմից, վերջինիս և «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի հիման վրա(16.08.2012թ. թիվ 84 պայմանագիր):

Թափոնները փաթեթավորվում են պոլիէթիլենով և ստվարաթղթով:

6. Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)-առաջանում է մարդու կենսագործունեությունից:

Թափոնի կազմը և բաղադրությունը %-ով.

- * սննդային մնացորդներից՝ 50%,
- * գրասենյակային պարագաններ՝ 3%,
- * թուղթ՝ 7%,
- * ստվարաթուղթ՝ 40%:

Այն Էկոլոնավոր է, հրդեհավտանգ է, ենթակա չէ կոռոզիայի:

Թափոնը կուտակվում է աղբահավաք տարողությունների մեջ: Կատարվում է աղբի տեսակավորում՝ առանձին տարաներում:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N342-Ն հրամանի՝ ՀՀ տարածքում գոյացող արտադրության, (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկի, գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3-4-րդ դասերին:

Թափոնների կառավարումը կատարվելու է համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 7-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների, հետևաբար թափոնները շրջակա միջավայրի վրա ազդեցություն չեն ունենա:

12.6 Աղմուկ և թրթռում.

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Գեղորայքի արտադրությունում աղմուկի մակարդակի աղբյուր են հանդիսանում հոսքագծերը և օդափոխության համակարգի սարքավորումները՝ տեղադրված շինության տանիքում և յուրաքանչյուր հարկում: Ձեռնարկությունում աղմուկի մակարդակը հաստատուն է և գտնվում է նորմերի սահմաններում՝ առավելագույնը 39,4դբ: Ձեռնարկության տարածքը գտնվում է բնակավայրերից մոտ 60մ հեռավորության վրա: Արտադրամասի տարածքում աղմուկի մակարդակը գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում, ուստի չի կարող ազդեցություն ունենալ արտադրամասի աշխատողների և հարակից տարածքում գտնվող բնակչության վրա:

Տեղադրվող նոր սարքավորումը չի առաջացնի աղմուկի մակարդակի փոփոխություն՝ ավելացում:

12.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեությունն իրականացվում է խիտ կառուցապատված տարածքում: Գործունեության և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքները: Ուստի վերջիններիս վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառվում են, հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության միջոցառումներ չեն նախատեսվում:

12.8 Արտակարգ իրավիճակներ և անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկեր՝ կապված.

- հրդեհների առաջացման,
- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- կաթսայատան և այլ սարքավորումների շահագործման ժամանակ հնարավոր վթարային իրավիճակների առաջացման հետ:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով ընկերության տարածքում առկա է համապատասխան ստորաբաժանման հետ համաձայնեցված «Աղետների և վթարների կառավարման պլան»-ը՝ նշված վթարային ելքերով: Տարածքն ապահովված է հակահրդեհային վահանակներով, օդափոխության և հակահրդեհային ազդարարման համակարգերով, տեսահսկման այլ ազդանշանային սարքերով:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

12.9 Մարդու առողջություն և աշխատանքի անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված արտադրական գործընթացում առաջացող հնարավոր վթարների և ոչ բավարար աշխատանքային պայմանների հետ:

- Դեղագործական արտադրության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտման,
- արտադրանքի որակի անհամապատասխանության, ժամկետայնության,
- արտադրական գործընթացում առաջացող հնարավոր վթարների՝ հոսքազդերի անսարքության, վթարների, տեխնոլոգիական ցկյլի խաթարման,
- աշխատանքի ռեժիմի խաթարման (գազի կամ հոսանքի մատակարարման խափանումներ),
- ոչ բավարար աշխատանքային պայմանների հետ:
- բժկական թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- լաբորատորիայում օգտագործվող նյութերի օգտագործման, տեղափոխման հետ:

Տարածքում փակցված են աշխատանքի անվտանգությունն ազդարարող տեղեկատվական վահանակներ: Առկա է ազդանշանային համակարգ:

Մարդու առողջության պահպանման, միջազգային ստանդարտների՝ դեղերի որակական ցուցանիշների համապատասխանության նպատակով ընկերությունում ներդրվել է որակի կառավարման համակարգ (ՈԿՀ), որը ներառում է այն բոլոր գործոնների ամբողջությունը, որոնք միասին կամ առանձին-առանձին ազդում են արտադրանքի որակի վրա: Դեղագործական արտադրանքի որակի ապահովման համար ներդրվել է միջոցառումների համակարգ, որը հենվում է Պատշաճ արտադրական գործունեության ՊԱԳ (GMP), ԻՍՈ (ISO), ICH միջազգային ստանդարտների վրա:

ՈԿՀ-ն ընդգրկում է արտադրության բոլոր փուլերը՝ նյութերի ձեռքբերում, հսկում, տարածքների, համակարգերի և սարքավորումների ապահովում, արտադրություն, արտադրանքի բացթողում, պահպանում, բաշխում, արտադրանքի դադարեցում, փաստաթղթերի, նմուշների պահպանում, արտադրանքի շարունակական գնահատում ու հաշվետվությունների կազմում:

Որակի հսկողությունը իրականացվում է ջրի, ելանյութերի, միջանկյալ, պատրաստի արտադրանքի նմուշառման, առանձնահատկությունների և թեստավորման (ֆիզիկական, քիմիական, մանրէաբանական), արտադրական միջավայրի դիտարկման, կայունության ուսումնասիրությունների միջոցով, ելնելով ընկերության կողմից հումքի, փաթեթավորման նյութերի, տպագրական նյութերի որակական ցուցանիշների նկատմամբ սահմանված պահանջներից:

Նյութերի և արտադրանքների ընդունումը, նմուշառումը, կարանտինը, պահպանումն ու կարգավիճակի պիտակավորումը կատարվում են գրավոր հրահանգների համաձայն՝ արձանագրվում են:

Շնորհիվ Վալիդացման քաղաքականության՝ արտադրանքը մշակվում, արտադրվում և շուկա է դուրս բերվում սահմանված Որակի չափանիշներին և դրանց նպատակային օգտագործմանը համապատասխան:

Դեղերի անվտանգության և արդյունավետության դիտարկման նպատակով «ԼԻԿՎՈՐ» ընկերությունում ներդրվել և գործում է «Դեղագոգնություն» բաժինը, որի նպատակն է

ժամանակին հայտնաբերել, գնահատել, հետազոտել և կանխել դեղերի օգտագործման հետ կապված կողմնակի ազդեցությունները և այլ խնդիրները:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական, ինչպես նաև միջազգային ստանդարտների վրա հենված ՊԱԳ միջոցառումների իրականացում՝ ուղղված պատրաստի արտադրանքի որակի շարունակական բարելավմանն ու սպառողի պահանջների բավարարմանը:

12.10 Սոցիալական ազդեցություն.

Գործունեությունն իրականացվելու է արդեն գոյություն ունեցող արտադրական տարածքներում, նոր տարածքներ ձեռք չեն բերվելու: Ներկա վիճակում ընկերությունում փաստացի աշխատողների թվաքանակը կազմում է ընդհանուր 118 մարդ, որից վարչական՝ 35, արտադրության աշխատողներ (ԻՏԱ) 60, որակի կառավարման դեպարտամենտում աշխատողներ՝ 23 մարդ:

Գործարանն աշխատում է 1 հերթափոխով՝ 275 օր/տարի: Հերթափոխի և աշխատանքային օրերի փոփոխություն չի առաջանալու:

Արտադրության վերազինումը բեռնափոխադրումների ավելացում չի առաջացնի, քանի որ դեղամիջոցների նկատմամբ պահանջարկի բավարարումը կկատարվի նույն մատակարարման հաճախականությամբ, ինչը կատարվում է ներկա վիճակում: Մեքենաների տարողությունները բավարար են անհրաժեշտության դեպքում լրացուցիչ քանակի դեղորայք մատակարարելու համար: Ուստի արտադրության վերազինումը ճանապարհների լրացուցիչ ծանրաբեռնվածություն և սոցիալական բացասական ազդեցություններ չի առաջացնի:

Արտադրամասի վերազինման արդյունքում նոր աշխատատեղեր չեն ավելացվելու, սոցիալական նոր ազդեցություններ չեն առաջանալու, հետևաբար համապատասխան միջոցառումներ չեն նախատեսվում:

12.11 Կանաչապատում

Գործարանի տարածքը կանաչապատված է: Կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 600մ², առկա են հետևյալ ծառատեսակները՝ ակացիա-11 հատ, կատալպա-2 հատ, բարդի-17 հատ, ընկուզենի-2 հատ:

Կանաչ տարածքի խնամքը (ոռոգում, էտում և բուժ պրոֆիլակտիկ աշխատանքներ) կատարվում է առանձին մասնագետի կողմից:

Ծառերը ոռոգվում են խմելու ջրով, ոռոգման ջրի բացակայության, ինչպես նաև ստերիլ միջավայր պահպանելու պատճառով:

Վերազինման արդյունքում կանաչապատ տարածքների փոփոխություն, ինչպես նաև նոր կանաչ տարածքների ավելացում չի նախատեսվում:

12.12 Գումարային ազդեցություններ.

Տարածքում այլ արտադրություններ չկան, հետևաբար որևէ այլ արտանետման աղբյուր չկա, ուստի գումարային ազդեցություններ չեն հաշվարկվում:

13. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + \Omega \text{ԱԳ} + \text{ՕԱԳ},$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է գումարային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Դեղագործական արտադրությունն իրականացվում է գոյություն ունեցող արտադրական տարածքում: Վերագինման արդյունքում նոր հողային տարածքներ ձեռք չեն բերվելու, հետևաբար հողերի աղտոտում կամ վնասում չի կատարվելու, ուստի հողերի վրա ազդեցությունից բխող տնտեսական վնաս չի հաշվարկվում:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցությունը կախված է աղտոտող նյութերի քանակությունից, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի մակարդակից և դրանց ազդեցության ժամանակահատվածից: Դեղագործական արտադրության իրականացման ընթացքում օգտագործվելու է մաքուր խմելու ջուր: Արտադրությունից առաջացած կեղտաջրերը ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չունեն, հեռացվում են քաղաքային մաքրման կայան, իսկ կեղտաջրերի որակական կազմը համապատասխանում է «Ալեքսիա» մաքրման կայան մուտք գործող կեղտաջրերի ՀՀ-ում սահմանված նորմերին, ուստի ջրային ռեսուրսների վրա տնտեսական վնաս չի հաշվարկվում:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի վրա տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունված՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատելու մասին թիվ 91-Ն որոշման:

Համաձայն վերոնշյալ որոշման՝ յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա = 1000 \cdot \text{Շգ} \cdot \text{Վ}_i \text{ որտեղ } \text{Վ}_i$$

Ա-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

Շ_q-ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի՝ արդյունաբերական ձեռնարկությունների տարածքի համար սահմանված է 8:

Վ_i-ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, համաձայն նշված կարգի 10-րդ և 11-րդ աղյուսակների՝ ածխածնի օքսիդի համար՝ 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5:

Ք_i –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Փ_g-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի համաձայն՝ $\Phi_g = 1000$ դրամ:

Ք_i գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Ք}_i = S_i q$$

որտեղ՝

S_i-ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկն իրականացվում է անշարժ աղբյուրների համար:

Արտանետումների քանակների և դրանց հետևանքով տնտեսական վնասի հաշվարկները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնտեսական վնասի հաշվարկը

Աղյուսակ 19

Վնասակար արտանետումների անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը, տ/տարի			Վ _i	σ _q	Տնտեսական վնասը, ՀՀ դրամ
	S _i	q	Ք _i = S _i · q			Մ=1000· Շ _q · Վ _i
1	2	3	4	5	6	7
1.Ածխածնի օքսիդ	0,39	1	0,39	1	8	3120
2. Ազոտի օքսիդներ	0,915	1	0,915	12,5	8	91500
ԸՆԴԱՄԵՆԸ						94620

Գոլորշու տեսքով արտանետումների աննշան քանակական ցուցանիշների տնտեսական վնասը չի հաշվարկվել, շատ փոքր, գրեթե աննշան լինելու պատճառով:

Ըստ հաշվարկների սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է՝ 94620 դրամ, ինչը որևէ պարտավորություն չի առաջացնում:

14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, ինչպես նաև թափոնների կառավարման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության վերազինման արդյունքում նախատեսվող միջոցառումները նպատակ ունեն նվազեցնելու և հնարավորինս կրճատելու մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերը՝ հողի, ջրի և օդի աղտոտվածության նվազեցման, ինչպես նաև թափոնների կառավարման, արտակարգ իրավիճակների, աշխատանքի անվտանգության պահպանման միջոցով:

«ԼԻԿՎՈՐ» ՓԲ ընկերության կողմից կիրառվում է նաև որակի ռիսկերի կառավարման մեթոդաբանություն, որի նպատակն է հայտնաբերել, գնահատել և միջոցներ կիրառել պոտենցիալ ռիսկերը կանխարգելելու, նվազեցնելու, մնացորդային ռիսկերը ընդունելու կամ վերացնելու համար, և բացառել նրանց հնարավոր ազդեցությունը վերջնական արդյունքների վրա, օգտագործելով համապատասխան վիճակագրական և վերլուծական գործիքներ:

14.1 Օդային ավազան

Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- պարբերաբար իրականացնել սարքավորումների հսկման, դրանց հերմետիկության ստուգումներ,
- բացառել անսարք վիճակում կաթսայատան և սարքավորումների աշխատանքը,
- հոսքագծերի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի մասնագիտական պատրաստվածություն անցած մասնագետների կողմից,
- սպասարկող անձնակազմին տեղեկատվություն տրամադրել հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման վերաբերյալ,
- կաթսայատան, ինչպես նաև այլ սարքավորումների անսարքության ժամանակ սարքավորումներն անջատվում են, դադարեցվում է կաթսայատան գազի մատակարարումը՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով,
- անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում սահմանափակել վառելիքի մատակարարումը կաթսա, խստորեն հետևել կաթսայի աշխատանքին, կատարել օդային ավազանի տեսողական դիտարկումներ՝ գազի այրման տեխնոլոգիական գործընթացին՝ ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով,
- ՄԹԱ նորմատիվը գերազանցելու դեպքում, դադարեցնել աշխատանքը, տեղյակ պահել մթնոլորտի պահպանության համապատասխան գերատեսչական մարմնին և ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ միջոցներ:

14.2 Ջրային ռեսուրսներ

Շրջակա միջավայրի վրա կեղտաջրերի ազդեցությունը մեղմելու նպատակով.

- սարքերը լվանալու և մանրէազերծելու ժամանակ առաջացող կեղտաջրերը մինչև ընդհանուր կոյուղի լցնելը ամեն օր նոսրացնել լվացման ջրով՝ 1:100 հարաբերությամբ,

- բացառել կոյուղու ցանց այնպիսի նյութերի թափումը, որոնք կհանգեցնեն կոյուղու համակարգի խցանմանը, պոմպակայանների աշխատանքին, խողովակների քայքայմանը, կիսաթարեն հոսքաջրերի բնականոն հոսքը,

- քաղաքային կոյուղու կոլեկտոր թափվող տնտեսա-կենցաղային հոսքաջրերի որակական հատկանիշները համապատասխանում են «Աէրացիա» մաքրման կայան մտնող կեղտաջրերի համար ՀՀ-ում ընդունված աղտոտող նյութերի նորմատիվային պահանջներին,

- հեռացվող կեղտաջրերի խառնուրդի ակտիվ ռեակցիան (pH) կպահպանվի 6.5-9.0 սահմաններում, ինչպես նաև կախյալ նյութերի և այլ խառնուրդների պարունակությունները, կեղտաջրերի ջերմաստիճանը (չպետք է գերազանցի 40°C), պետք է համապատասխանի մաքրման կայան՝ «Աէրացիա» մուտք գործող կեղտաջրերի ՀՀ-ում սահմանված նորմերին, հոսքաջրերում սահմանված թույլատրելի կոնցենտրացիաներին,

- բացառել ջրային ռեսուրս կեղտաջրերի արտահոսքը:

Մակերևութային ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի կարող լինել, քանի մոտակա տարածքում մակերևութային ջրային ռեսուրսներ առկա չեն:

14.3 Թափոններ

Թափոնների վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով.

- թափոնների կառավարումը կատարվելու է ՀՀ Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 7-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին համապատասխան,

- բացառել թափոնատեսակների միմյանց խառնելը, թափոնները պահվում են առանձնացված սենյակում, նախօրոք, տարանջատելով ըստ թափոնատեսակի,

- թափոնների հավաքելու, փակելու և տեղափոխելու պարտականություններ կատարող անձը կրում է համապատասխան արտահագուստ,

- բժշկական թափոնները հավաքվում (տարանջատվում) և պահվում են առանձին՝ ըստ տեսակների՝ դիմացկուն, անթափանց, ամուր կողքերով և հատակով արտահոսք չունեցող մեկանգամյա օգտագործման կարծր տարողությունների մեջ,

- բժշկական թափոնների փակված տարողությունները կարող են բացվել միայն վերջիններիս վնասազերծման նպատակով,

- թափոնների կուտակման վայրերը և տարողությունները պաշտպանված են մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն,

- թափոնների պահման տարածքը ախտահանվում է պարբերաբար և ապահովված է ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով, պատերն ու առաստաղն ունեն անջրաթափանց ծածկույթ, տարածքի դռները ապահովվում են բժշկական թափոնների բեռնարկղերն ավտոտրանսպորտի միջոցով տեղափոխելու հնարավորությամբ,

- բացառվում է վնասված տարաներում բժշկական թափոնների պահումը,

- բազմակի օգտագործման տարողությունները ենթակա են ախտահանման յուրաքանչյուր բեռնաթափումից հետո, պարբերաբար (առնվազն շաբաթը մեկ անգամ)

ախտահանվում և օգտագործվում են բացառապես բժշկական թափոնների տեղափոխման համար:

Թափոնները հանձնվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպություններին՝ ըստ անհրաժեշտության, դրանք վերամշակելու, վնասագերծելու, պահպանելու, փոխադրելու և/կամ տեղադրելու նպատակով: Մասնավորապես.

- արտադրական թափոնները՝ (11.5 կետի՝ 1,2,3,4,5 ենթակետերում նշված) տարանջատված և պիտակավորված, ինչպես նաև մանրէազերծ ֆիլտրերը հանձնվում են թափոնների վերամշակման ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, մասնավորապես «Էկոլոգիա Վ. Կ. Հ» ՍՊԸ-ին, որն իրականացնում է բժշկական թափոնների վնասագերծում՝ այրման վառարանի միջոցով,
 - թղթի թափոնները (ներառյալ նաև թղթե գլխարկներ, դիմակները) հանձնվում են թղթի վերամշակման ձեռնարկություններին,
 - թափոնները տեղափոխվում են հատուկ արկղերով և տրանսպորտով՝ բացառելով թափոնների շփումը շրջակա միջավայրի հետ,
 - խոտանված ապրանքատեսակները, մերժված նյութերը և արտադրանքը համապատասխան պիտակավորումով պահվում են առանձին պահեստում՝ դրանց համար նախատեսված հատվածում,
 - օգտագործված դիմակները, ձեռնոցները, գլխարկները, լաթերը 1/10 հարաբերակցությամբ խառնվում են կենցաղային աղբին և տեղափոխվում աղբավայր՝ համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 29 հոկտեմբերի 2009թ. թ. N20-Ն հրամանի հավելված 1-ի,
 - կենցաղային աղբը համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից տեղափոխվում է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:
- Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է առաջանան նաև այլ թափոններ՝ մետաղական մասեր, կապված տարբեր սարքավորումների փչանալու կամ վերանորոգման հետ: Այն մետաղյա մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման՝ հանձնվում են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին:

14.4 Աղմուկ և թրթռում

- Արտադրությունում աղմուկը չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը.
- բացառվում է սարքավորումների և օդափոխության սարքերի անսարք վիճակում աշխատելը,
 - բացառվում է աշխատատեղերում աղմուկի մակարդակի 70 դԲ (A) գերազանցումը, գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն),
 - աշխատելու ընթացքում պարբերաբար ընկերության կողմից սեփական աղմկաչափով ստուգվում են աղմուկի մակարդակը, վերջինիս գերազանցելու դեպքում աղմուկի առաջացման սարքն անջատվելու է մինչև անսարքության վերացումը:

14.5 Արտակարգ իրավիճակներ և անվտանգություն

Արտակարգ իրավիճակների առաջացման և անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է.

- հրդեհային անվտանգության ապահովում, ընկերության տարածքում տեղադրված են հակահրդեհային հիդրատներ, կրակմարիչներ՝ 21 հատ, հակահրդեհային վահանակներ, ինչպես նաև անվտանգության ապահովման այլ ազդանշանային սարքեր և վահանակներ,
- քամու, մթնոլորտային տեղումների ժամանակ աշխատանքների վերահսկողությունն ուժեղացվում է, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքը դադարեցվում է, բոլոր տեսակի սնուցման աղբյուրներն անջատվում են,
- անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում հետևելու են տեխնոլոգիական գործընթացին, թույլ չտալով սարքավորումների գերբեռնված աշխատանքը,
- գործունեության տարածքում փակցված է արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ընկերությունն ապահովված է տեսախցիկներով, համապատասխան վերահսկման սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,
- հոսքագծի և այլ սարքավորումների անսարքության ժամանակ անմիջապես անջատվելու են համապատասխան սարքավորումները՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով:

14.6 Մարդու առողջություն և անվտանգություն, աշխատանքի կազմակերպում

Դեղերի արտադրության ընթացքում մարդու առողջության պահպանման, դեղերի որակի և աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է.

- դեղերի արտադրությունը կազմակերպել ՀՀ-ում գործող օրենսդրության՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշումների, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան,
- ապակյա շշիկների, խցանների և կափարիչների լվացում՝ ներարկման ջրով,
- տեխնոլոգիական սարքավորումների լվացում՝ սկզբում խմելու ջրով, ապա ներարկման ջրով, արտադրությունում տեղադրված ներարկման ջրի ստացման սարքավորման միջոցով,
- տեխնոլոգիական սարքավորումների մանրէազերծվում՝ 121⁰C մաքուր գոլորշիով:
- պահպանել դեղագործական արտադրանքի՝ հումքի, ելանյութի, պատրաստի արտադրանքի որակի, փաթեթավորման, պիտակավորման, մակնշման համապատասխանությունը և ժամկետների վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները,
- որակի քաղաքականության, չափորոշիչների, որակի ռիսկերի կառավարման բարելավում,
- պահպանել դեղերի պատշաճ արտադրական գործունեության և արտադրողի որակավորման պահանջները՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, ապահովել համապատասխանությունը ՊԱԳ, Եվրոպական ստանդարտների(GMP) պահանջներին,
- իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 7-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,
- ապահովել աշխատողների համապատասխան մասնագիտական որակավորումը, փորձը, անհրաժեշտության դեպքում պարբերաբար իրականացնել ըստ ուսուցման փուլերի մասնագիտական դասընթացներ՝ մասնագիտական պատրաստվածությունը ստուգելու,

գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը և պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով,

- նյութերի գնում միայն գնահատված և հաստատված մատակարարներից կամ անմիջապես սպառողից, որոնք ունեն ԴԱԳ, ԴԲԳ, ԻՄՈ, ինչպես նաև դեղագործական ակտիվ բաղադրիչների պատշաճ որակը հաստատող հավաստագրեր,

- պատրաստի արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի հավաստագրում որակավորված անձի կողմից՝ նախքան վաճառքի կամ մատակարարման նպատակով դրա բացթողումը,

- դեղերի փոխադրումն իրականացնել փակ տրանսպորտային միջոցներով՝ հաշվի առնելով արտադրանքի համար սահմանված գործարանային պահման պայմանները,

- դեղերի փոխադրումը կատարել համապատասխան նշագրված տարաներով՝ արտադրանքի անվանումը, քանակը, խմբաքանակի համարը, պիտանիության ժամկետը,

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- աշխատողներին ապահովվել (ցնուդարան, լվացարան, խոհանոց, հանգստի սենյակ) համապատասխան սանիտարական պայմաններով,

- աշխատավայրում ապահովել առաջին բուժօգնության դեղարկիկներ՝ համապետական համակարգի ներդաշնակ և հուսալի աշխատանքի կազմակերպման և աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար,

- վտանգավոր թափոնները ժամանակավոր կուտակել հատուկ հատկացված տեղերում, տեսակավորել ըստ թափոնատեսակի, ելնելով վերջիններիս որակական հատկանիշներից,

- մինչև թափոնների տեղափոխելը վերջիններս պահել փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը,

- աշխատակիցներին ապահովել հատուկ, անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ձեռնոցներ, համապատասխան արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, կոշիկներ):

15. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Դեղագործական արտադրության գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմմանն ուղղված:

Այդ նպատակով իրականացվում և նախատեսվում է.

- Թողարկվող արտադրանքը պետք է համապատասխանի Դեղերի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշումների, Առողջապահության նախարարի հրամանների(թիվ 03 և 20), դրանց որակը և անվտանգությունը սահմանող ստանդարտների, տեխնիկական պայմանների պահանջներին՝ մարդու առողջությունը չվտանգելու նպատակով:
- «ԼԻԿՎՈՐ» ընկերության կողմից ՈԿՀ-ի շրջանակներում կանոնավոր, պլանային ներքին ստուգումներ՝ արտադրական պատշաճ գործելակերպի կիրարկումը դիտանցելու և անհրաժեշտ ուղղիչ միջոցներ առաջարկելու նպատակով:
- Ապահովել արտադրության նպատակով ձեռք բերվող նյութերի ապրանքների մուտքային վերահսկողությունը:
- Պահպանել արտադրանքի պահպանման, տեղափոխման փուլերում արտադրանքի որակական հատկանիշները՝ ՊԱԳ գործող պահանջներին համապատասխան:
- Ապահովել հումքի և փաթեթների նմուշառման գործընթացը՝ ՊԱԳ գործող պահանջներին համապատասխան:
- Ապահովել աշխատողների մասնագիտական որակավորումը, համապատասխանությունը ՊԱԳ պահանջներին:
- Վերջնական արտադրանքի հավաստագրման և բաց թողման ստուգումներ՝ անալիտիկ փորձաքննությունների մեթոդների կիրառմամբ:
- Դեղալցման սենյակում օդի մեջ մասնիկների քանակի մշտադիտարկում՝ համակարգչային եղանակով:
- Թափոնների կառավարումը կատարվում է ՀՀ Առողջապահության նախարարի 29 հոկտեմբերի 2009թ. թ. N20-Ն և 2008 թվականի մարտի 7-ի թիվ 03-Ն հրամանների պահանջներին համապատասխան:
- Բաց տարածքներում վտանգավոր թափոնների հայտնաբերվելու դեպքում տեղեկացվում է համապատասխան պատասխանատու անձանց՝ թափոնները մեկուսացնելու նպատակով:
- Աղբամանների ախտահանում համապատասխան ախտահանիչ միջոցներով:
- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու ուժեղացում, փոթորիկ և այլն) դեպքում հետևել կաթսայատան աշխատանքին, տեխնոլոգիական գործընթացին, կատարել օդային ավազանի տեսողական դիտարկումներ՝ զազի այրման ընթացքում օդային ավազան արտանետումները կանխելու նպատակով:
- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում՝ միջոցառումներն իրականացվելու են ընկերության անվտանգության պատասխանատուի կամ նրան

փոխարինող անձի կողմից:

- Գործունեության ընթացքում արտահոսքի, անսարքությունների դեպքում աշխատանքները դադարեցվում են՝ ժամանակավոր կամ վերջնական՝ մինչև դրանց կարգաբերումը:

16. Բողոքների ընթացակարգ

Ընկերությունում ներդրված է արտադրանքի վերաբերյալ բողոքների ընթացակարգ՝ սպառողների կողմից արտադրանքի շեղումների, որակի անհապատասխանության վերաբերյալ՝ բողոքներին արձագանքելու, ինչպես նաև արտադրանքի որակի անհամապատասխանությունը, շեղումները, պատճառները բացահայտելու, ժամանակին արձագանքելու և թերությունները վերացնելու նպատակով:

Դեղերի որակի նկատմամբ բոլոր բողոքները գրանցվում են համապատասխան գրանցամատյանում և քննության են առնվում համապատասխան գրավոր ընթացակարգով՝ արտադրանքի հետևանքը շուկայից արագ կազմակերպելու նպատակով:

17. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների (կառավարման պլան) նախագիծ

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է ՇՄԱԳ հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը:

**18.Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների
(կառավարման պլան) նախագիծ**

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող	Ծախսերը / դրամ/
1	Օդային ավազան	• Պարբերաբար իրականացնել սարքավորումների հսկման, դրանց հերմետիկության ստուգումներ, • բացառել անսարք վիճակում կաթսայատան և սարքավորումների աշխատանքը, • սպասարկող անձնակազմին տրամադրվել անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման հնարավորության վերաբերյալ տեղեկատվություն, • կաթսայատան, ինչպես նաև այլ սարքավորումների անսարքության ժամանակ անջատվում են(ավտոմատ) սարքավորումները, դադարեցվում է կաթսայատան գազի մատակարարումը՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով, • հոսքագծի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն անցած «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի մասնագետների կողմից, • անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում սահմանափակել վառելիքի մատակարարումը կաթսա, խստորեն հետևել կաթսայի աշխատանքին, կատարել օդային ավազանի տեսողական դիտարկումներ՝ գազի այրման տեխնոլոգիական գործընթացին՝	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

		ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով, ՄԹԱ նորմատիվը գերազանցելու դեպքում դադարեցնել աշխատանքը, տեղյակ պահել մթնոլորտի պահպանության համապատասխան գերատեսչական մարմինն և ձեռնարկել համապատասխան կանխարգելիչ միջոցներ:			
2	Կեղտաջրեր	- Քաղաքային կոյուղու կոլեկտոր թափվող հոսքաջրերի որակական հատկանիշների համապատասխանեցում ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, «Ալբացիա»-ի մաքրման կայան մտնող կեղտաջրերի համար ՀՀ-ում ընդունված աղտոտող նյութերի նորմատիվային պահանջներին, - սարքերը լվանալու և մանրէազերծելու ժամանակ առաջացող կեղտաջրերի ամենօրյա նոսրացում լվացման ջրով՝ 1:100 հարաբերությամբ, հետո մղում ընդհանուր կոյուղու ցանց, - բացառել կոյուղու ցանց այնպիսի նյութերի թափումը, որոնք կհանգեցնեն կոյուղու համակարգի խցանմանը, խողովակների քայքայմանը, կխաթարեն հոսքաջրերի բնականոն հոսքը, - հեռացվող կեղտաջրերի խառնուրդի ակտիվ ռեակցիան (рН) կպահպանվի 6.5-9.0 սահմաններում, ինչպես նաև կախյալ նյութերի և այլ խառնուրդների պարունակությունները, կեղտաջրերի ջերմաստիճանը պետք է համապատասխանի մաքրման կայան՝ «Ալբացիա»-ի մաքրման կայան մուտք գործող կեղտաջրերի ՀՀ-ում սահմանված նորմերին, հոսքաջրերում սահմանված թույլատրելի կոնցենտրացիաներին, - բացառել ջրային ռեսուրս կեղտաջրերի արտահոսքը:	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան տեսչական մարմիններ	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

3	Թափոններ	- Թափոնների կառավարումը կատարվելու է համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 7-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների, - թափոնների հավաքելու, փակելու և տեղափոխելու պարտականություններ կատարող անձը պետք է կրի համապատասխան արտահագուստ, - բժշկական թափոնները հավաքվում (տարանջատվում) և պահվում են առանձին՝ ըստ տեսակների՝ դիմացկուն, անթափանց, ամուր կողքերով և հատակով արտահոսք չունեցող մեկանգամյա օգտագործման կարծր տարողությունների մեջ, - բժշկական թափոնների փակված տարողությունները կարող են բացվել միայն վերջիններիս վնասագերծման նպատակով, - թափոնների կուտակման վայրերը և տարողությունները պետք է պաշտպանված լինեն մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն, - թափոնների պահման տարածքը պետք է ախտահանվի պարբերաբար և ապահովված լինի ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով, պատերն ու առաստաղն ունենան անջրաթափանց ծածկույթ, տարածքի դռները ապահովեն բժշկական թափոնների բեռնարկներն ավտոտրանսպորտի միջոցով տեղափոխելու հնարավորություն, - բացառել թափոնատեսակների միմյանց խառնելը, թափոնները պահվում են առանձնացված սենյակում, նախօրոք, տարանջատելով ըստ թափոնատեսակի, - բացառել վնասված տարաններում	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան տեսչական մարմիններ	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում՝ ըստ կնքված պայմանագրի
---	----------	---	--------------	---	---

		բժշկական թափոնների պահումը, • բազմակի օգտագործման տարողությունները ենթակա են ախտահանման յուրաքանչյուր բեռնաթափումից հետո, պարբերաբար (առնվազն շաբաթը մեկ անգամ) ախտահանվում և օգտագործվում են բացառապես բժշկական թափոնների տեղափոխման համար: • արտադրական թափոնները՝ (11.5կետի՝ 1,2,3,4,5 ենթակետերում նշված) տարանջատված և պիտակավորված, ինչպես նաև մանրէազերծ ֆիլտրերը հանձնվում են թափոնների վերամշակման ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, մասնավորապես «Էկոլոգիա Վ.Կ.Հ»ՍՊԸ-ին, որն իրականացնում է բժշկական թափոնների վնասազերծում՝ այրման վառարանի միջոցով, • թղթի թափոնները (ներառյալ նաև թղթե գլխարկներ, դիմակները) հանձնվում են թղթի վերամշակման ձեռնարկություններին, • թափոնները տեղափոխվում են հատուկ արկղերով և տրանսպորտով՝ բացառելով թափոնների շփումը շրջակա միջավայրի հետ, • օգտագործված դիմակները, ձեռնոցները, գլխարկները, լաթերը 1/10 հարաբերակցությամբ խառնվում են կենցաղային աղբին և տեղափոխվում աղբավայր՝ համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 29 հոկտեմբերի 2009թ. թ. N20-Ն հրամանի հավելված 1-ի, • կենցաղային աղբը համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից տեղափոխվում է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:			
--	--	---	--	--	--

4	Աղմուկ և թրթռում	• Ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված աղմուկի մակարդակի նորմերը, • բացառել սարքավորումների և օդափոխության սարքերի անսարք վիճակում աշխատելը, • բացառել աշխատատեղերում աղմուկի մակարդակի 70դԲ (A) գերազանցումը, գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (ստերիլ գլխարկներ, ականջակալներ), • աշխատելու ընթացքում պարբերաբար ստուգել աղմուկի մակարդակը, վերջինիս գերազանցելու դեպքում աղմուկի առաջացման սարքն անջատվելու է, մինչև անսարքության վերացումը:	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան մասնագիտակ ուն	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում
5	Արտակարգ իրավիճակներ	• Ընկերության տարածքում տեղադրված են հակահրդեհային հիդրատներ, կրակմարիչներ՝ 21 հատ, հակահրդեհային վահանակներ, ինչպես նաև անվտանգության ապահովման այլ ազդանշանային սարքեր և վահանակներ, • քամու, մթնոլորտային տեղումների ժամանակ աշխատանքների վերահսկողությունն ուժեղացվում է, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքը դադարեցվում է, բոլոր տեսակի սնուցման աղբյուրներն անջատվելու են, • անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում հետևելու են տեխնոլոգիական գործընթացին, թույլ չտալով սարքավորումների գերբեռնված աշխատանքը, • գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, • ընկերությունն ախտահովված է	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ	Համապատասխան տեսչական մարմին	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

		տեսախցիկներով, համապատասխան վերահսկման սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, • հոսքագծի և այլ սարքավորումների անսարքության ժամանակ անմիջապես անջատվելու են համապատասխան սարքավորումները՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով:			
6	Աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն	• Դեղերի արտադրությունը կազմակերպել ՀՀ-ում գործող օրենսդրության՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշումների, Առողջապահության նախարարի հրամանների պահանջներին համապատասխան, • ապակյա շիկների, խցանների և կափարիչների լվացում՝ ներարկման ջրով, • տեխնոլոգիական սարքավորումների լվացում՝ սկզբում խմելու ջրով, ապա ներարկման ջրով, արտադրությունում տեղադրված ներարկման ջրի ստացման սարքավորման միջոցով, • տեխնոլոգիական սարքավորումների մանրէազերծվում՝ 1210C մաքուր գոլորշիով, • ապահովել համապատասխանությունը ՊԱԳ պահանջներին, պահպանել դեղագործական արտադրանքի՝ հումքի, որակի, փաթեթավորման, պիտակավորման, մակնշման և ժամկետների վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջները, • պահպանել դեղերի պատշաճ արտադրական գործունեության և արտադրողի որակավորման պահանջները՝ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, • իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 7-ի թիվ 03-Ն	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ	ՀՀ Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին և այլ գերատեսչությունների համապատասխան տեսչական մարմիններ	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

		հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները, • ապահովել աշխատողների համապատասխան մասնագիտական որակավորումը, փորձը, անհրաժեշտության դեպքում պարբերաբար իրականացնել մասնագիտական դասընթացներ՝ մասնագիտական պատրաստվածությունը ստուգելու, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով, • նյութերի գնում միայն գնահատված և հաստատված մատակարարներից կամ անմիջապես սպառողից, որոնք ունեն ԴԱԳ, ԴԲԳ, ԻՍՈ, ինչպես նաև դեղագործական ակտիվ բաղադրիչների պատշաճ որակը հաստատող հավաստագրեր, • պատրաստի արտադրանքի յուրաքանչյուր խմբաքանակի հավաստագրում որակավորված անձի կողմից՝ նախքան վաճառքի կամ մատակարարման նպատակով դրա բացթողումը, • պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, • աշխատողներին ապահովվել (ցնցուղարան, լվացարան, խոհանոց, հանգստի սենյակ) համապատասխան սանիտարական պայմաններով, • աշխատավայրում ապահովել առաջին			
--	--	--	--	--	--

		բուժօգնության դեղարկղիկներ՝ համապետական համակարգի ներդաշնակ և հուսալի աշխատանքի կազմակերպման և աշխատողներին ահրաժեշտ օգնություն ցույց տալու համար, • վտանգավոր թափոնները ժամանակավոր կուտակել հատուկ հատկացված տեղերում, տեսակավորել ըստ թափոնատեսակի, ելնելով վերջիններիս որակական հատկանիշներից, • մինչև թափոնների տեղափոխելը վերջիններս պահել փակ սենքերում, բացառելով կողմնակի մարդկանց մուտքը, • աշխատակիցներին ապահովել հատուկ, անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ձեռնոցներ, համապատասխան արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, կոշիկներ): • դեղերի փոխադրումը կատարել համապատասխան նշագրված տարաներով՝ արտադրանքի անվանումը, քանակը, խմբաքանակի համարը, պիտանիության ժամկետը:			
--	--	--	--	--	--

19. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

հհ	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի Վայրը	Իրականացման ձևը	Ժամանակամ իջոց	Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող
1	Գործարանի աշխատելու ընթացքում օդային ավազան	Օդային ավազան արտանետումների պարբերական վերահսկում	Գործունեության ենթակա տարածքում	Համապատասխան մասնագետի կողմից ստուգայցեր, գործիքային ստուգումներ	Պարբերաբար	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան տեսչական մարմին
2	Կեղտաջրերի հեռացում	Կեղտաջրերի հեռացման նորմատիվ ցուցանիշների համապատասխանություն ևն ԱԷրացիա մուտք գործող թույլատրելի պահանջներին:	Գործունեության տարածքում	դիտարկումներ, Մասնագետի կողմից ստուգայցեր	Պարբերաբար	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարա կային և այլ համապատասխան վերահսկողական մարմիններ:

2	Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն	1. Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին: 2. Հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան: 3. Արտակարգ իրավիճակների պլանի առկայություն՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:	Գործունեության իրականացման վայր:	Իրազեկումներ և ստուգումներ	Ամենօրյա ռեժիմով,	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ
3	Աղմուկ, թրթռում	Աղմուկի և թրթռումների մակարդակի չափագրումներ:	Գործունեության իրականացման ենթակա տարածքում	Ստուգումներ	Պարբերաբար Ստուգայցեր՝ համապատասխան մասնագետի կողմից	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան գերատեսչությունների տեսչական մարմիններ

4	Թ-ափոփոներ	1.Թ-ափոփոների տեսակավորում, պահպանում, կանոնավոր տեղափոխում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա: 2.Թ-ափոփոների տեսակավորում, առանձնացում, պիտակավորում ըստ թափոնատեսակի:	Գործունեության տարածքից Արտադրական տարածքում	Ստուգումներ Տեսակավորում՝ համապատասխան մասնագետի կողմից	Պայմանագրերում ամրագրված ժամանակացույցին համապատասխան Պարբերաբար	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային և այլ համապատասխան վերահսկողական և տեսչական մարմիններ:
5	Նյութեր, արտադրություն	1.Դեղերի արտադրությունում օգտագործվող նյութերը համապատասխանում է ՀՀ-ում գործող օրենսդրության՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշումների, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին:	Արտադրական տարածքում	Դիտարկումներ՝ արտադրման ընթացքում	Ամենօրյա	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային և այլ համապատասխան վերահսկողական և տեսչական մարմիններ: «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական

		2. Ձեռք բերվող նյութերի, արտադրանքի համապատասխանության ապահովում՝ ՊԱԳ պահանջներին:		Վերահսկողություն		Լենտրոն» ՓԲԸ, ՊԱԳ/ՊԲԳ փորձագիտական բաժին
		3. Արտադրանքի, հոսքագծերի մաքրման վերահսկում:		Դիտարկումներ		
6	Տրանսպորտային միջոցներ	Օգտագործվող մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում:	Գործունեության վայր	Մասնագիտական ստուգումներ՝ մեքենաների շահագործման ընթացքում	Պարբերաբար	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան տեսչական մարմին
7.	Բողոքների ընթացակարգ	Հետաքննել բողոքները, շեղումները, անհամապատասխանությունները՝ կապված դեղերի արտադրության հետ, հետևել սպառողների կողմից որակի հետ կապված խնդիրների արձագանքմանը:	Գործունեության վայր	Ստուգումներ, ստուգայցեր	Պարբերաբար	«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ Համապատասխան տեսչական մարմին

«ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ն բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի կատարման համար հատկացնում է տարեկան 1.000 000 ՀՀ դրամ:

20. Հետնախագծային վերլուծություն

Մոնիթորինգի և միջոցառումների իրականացման արդյունքում կազմվում է հետնախագծային վերլուծության պլան, որում ներկայացվում է մոնիթորինգի արդյունքների համապատասխանությունը նախագծային լուծումների արդյունքում գնահատված հնարավոր ազդեցություններին: Որևէ բացասական շեղման կամ անհամապատասխանության դեպքում ձեռնարկողը նախատեսելու է լրացուցիչ միջոցառումներ աշխատանքների կարգաբերմանն և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված: Դրանք ևս ներառվում են հետնախագծային վերլուծության պլանում:

21. Հանրային ծանուցում և քննարկումներ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1325-Ն որոշման Ա կատեգորիայի նախատեսվող գործունեությունների համար նախատեսվում է չորս փուլով հանրային ծանուցման և քննարկումների իրականացում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկությունները և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

ԾՄԱԳ հաշվետվության շրջանականներում գործունեության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումն իրականացվել է Երևան քաղաքի Նոր-նորքի վարչական ղեկավարի նստավայրում, որտեղ հանրությանը ներկայացվել է նախատեսվող գործունեության նախագծային փաստաթուղթը և ԾՄԱԳ հաշվետվությունը: Քննարկումների ընթացքում առաջարկվեց արտանետման աղբյուրի ելքում տեղադրել սենսորներ՝ օդային ավազան արտանետումներն առցանց վերահսկելու նպատակով: Առաջարկն ընդունվեց ընկերության ներկայացուցչի կողմից, նշվեց որ կդիտարկեն և հնարավորության դեպքում կտեղադրեն:

Քննարկման արդյունքում ներկաները դրական են արտահայտվել գործունեության վերազինման վերաբերյալ (Հավելված 8,9):

ԾՄԱԳ հաշվետվության հանրային քննարկման /3-րդ փուլ/ վերաբերյալ տրված Երևանի քաղաքապետարանի գրությունում ներառված ջրի ծախսի վերաբերյալ պահանջը մանրամասնորեն ներկայացված է հաշվետվությունում, իսկ էլեկտրամատակարարման վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է Հաշվետվության համապատասխան բաժնում: Ձեռնարկությունը գործող է և էլեկտրաէներգիայի ծախսը կարգավորվում է «ԼԻԿՎՈՐ» ՓԲԸ-ի և «ՀԷՑ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի հիման վրա, որը ներառված է Հաշվետվության հավելվածում:

22. Եզրահանգում

Կարողությունների զարգացում. հաշվի առնելով դեղագործական արտադրության կարևորությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, ինչպես նաև միջազգային փորձը՝ արտադրությունը համալրված է բարձրորակ և փորձառու մասնագետներով: Միաժամանակ ըստ անհրաժեշտության կազմակերպվում է մասնագետների վերապատրաստման դասընթացներ՝ մասնագիտական որակավորումը բարձր պահելու, մարդու առողջության անվտանգությունը և շրջակա միջավայրի կայունությունն ապահովելու նպատակով: Հայաստանի

Հանրապետությունում պատերազմով պայմանավորված կտրուկ աճեց կաթիլաներարկման, ակնակաթիլների և ներարկման լուծույթների պահանջարկը, որն էլ նաև հիմք հանդիսացավ որպեսզի ընկերությունը վերազինի արտադրությունը՝ արդիականացնելով ժամանակակից սարքավորումներով:

Գրականություն

1. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
2. ՀՀ քաղաքաշինության նախարարություն 2013թ. «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՀՇՆ II-7.01-2011 նորմեր»:
3. Արտադրական ձեռնարկությունների սանիտարական նորմեր՝ 245-71
4. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի»N430-Ն հրաման:
5. ՀՀ Առողջապահության նախարարի 2020թ. հունվարի 21-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ, ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ, ԴԵՂԱԲՈՒՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ, ՊԻՏԱԿԱՎՈՐՄԱՆԸ, ՄԱԿՆՇՄԱՆԸ, ՆԵՐԴԻՐ ԹԵՐԹԻԿԻՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԻՆ ԵՎ ԴԵՂԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԴԵՂԻ ՓԱԹԵԹՎՐԱՊԱՐՏԱԴՐ ՆՇՄԱՆ ԵՆԹԱԿԱՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻ» N 02-Ն հրաման:
6. ՀՀ Առողջապահության նախարարի 2017թ. հունիսի 7-ի «Դեղ արտադրողի որակավորված անձին ներկայացվող պահանջները» N 28-Ն հրաման:
7. 2006թ. հոկտեմբերի 10-ի N 342-Ն ՀՀ Բնապահպանության նախարարի հրամանի;
8. Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 7-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
9. ՀՀ Առողջապահության նախարարի 29 հոկտեմբերի 2009 թ. N 20-Ն հրաման՝ «<ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ N 2.1.7.001-09 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ>>»:
10. ՀՀ բնապահպանության նախարարի 23 հոկտեմբերի 2012թ. N 268-Ա հրաման:
11. ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշում:

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳՐԱՆՅՄԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻ ՕՍՆԱԾՎՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՐԱՎՈՒՆԵՐ:

ՏՈՒՐԱԲԱՆԱԾՈՒՄ ԴՔ ՈՒՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԱԳԱՆ ԽՐԱՎՈՒՆԵՐ:

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԻՐ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՏՐԻԱՊԵՏՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՏԵՕՐԻՆՈՒՄ Է ԽՐՆ ՊԱՏՎԱՆՈՂ ԳՈՐԾԵՐ: ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՐԱՎՈՒՆԵՐ ԽՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԺՊԵՏԸ Է ՎՆԱՍ ՊԱՏՏՈՒՄԻ ՇՐՋԱՎԱ ՄԻՋՎԱՅՐԻՆ, ԽԱՆՏԻ ԱՅԼ ԱՆՉԱՆՏ, ՀԱՆՐԱՎՈՅՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՐԱՎՈՒՆԵՐՆԵՐ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ:


ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՌԱՂ Է ԶՐԿՆ ՄԻԱՅՆ ՂԱՏԱՐԱՆԸ՝ ՕՐԵՆՔՈՎ ԵՄԱՍՏԵՍՎԱԾ ՊԵՊԵՐՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Աճաբաժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է միակ փաստաթուղթ, որը հաստատում է աճաբաժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքը եւ սեփականատիրոջն իրավունք է տալիս կատարել աճաբաժ գույքի հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործողություններ:

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

(մասշտաբ)



Համար	Կապի երկարություն	Մակերես (մ²)
1-2	55.5	Համաձայն հարկի
2-3	108.0	Համաձայն հարկի
3-4	60.0	— — —
4-1	108.0	— — —

Բնակիչի անուն	Բնակիչի անուն
1	Արմենյան - 2

Բնակիչի անուն
Կատարող
(Ստորագրություն)

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՍՏՐԱԿՏԻ ՎԵՐԿԱՆՈՒՄԻ ԿՈՄԻՏԵ

1. Հ. 0. 0

(Նախագիծ)

Համար	Տարածք	Մակերես	Ծանոթություններ
1-2	50.5	108.0	Համաձայն հրահանգի
2-3	108.0	108.0	Համաձայն հրահանգի
3-4	60.0	108.0	Համաձայն հրահանգի
4-1	108.0	108.0	Համաձայն հրահանգի

Կառուցման օբյեկտ	Ստանդարտ համար
Համաձայն հրահանգի	Համաձայն հրահանգի


Համաձայն հրահանգի

Կառուցող

Համաձայն հրահանգի

$\frac{7}{6}$

rwg



Հավելված 3.

ՀԷՑ-ի կողմից տրված էներգամատակարարման պայմանագիրը և տեխնիկական պայմանը

Հավելված N°2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2017 թվականի մայիսի 31-ի N218Ը որոշման

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

Ֆ. Ներսիսյան (կնքման վայրը) 01.10 2018 թվական

Մատակարարը՝ **«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ**
Խոշոր սպառողների սպասարկման տնօրինություն
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս **տնօրեն՝ Ռ. Ասկարյան**

(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում
լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպառողը՝ **ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԵՆՏՐԱԼԻԶԱՐԵԼԻ ՍՊԵՑԻԱԼԻԶԱՐԵԼԻ ՍՊԵՍԿԱՆ**
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը,
ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի
Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)
հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման
կանոններով (այսուհետ՝ ԵՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով,
կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել Էլեկտրական Էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված Էլեկտրական Էներգիայի դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՅԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

Մատակարարը պարտավոր է՝

- 1) *Բ. Էփեն Բախչալ 719*
- հասցեում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի Էլեկտրական Էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված Էլեկտրամատակարարման միազեմ սխեմայի:
- 2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված Էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը:
- 3) Նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած Էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային քաժամուկների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:
- 4) ապահովել առևտրային հաշվառման սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը:
- 5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառման սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն:

www.ena.am

- 6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառման սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, քաջառությանը ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի:
- 7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել Էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված Էլեկտրաէներգիայի բանակությունները:
- 8) առևտրային հաշվառման սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները:
- 9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառման սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում:
- 10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ Էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած Էլեկտրական Էներգիայի արժեքի և բանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ:
- 11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ Էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ Էլեկտրոնային փոստի միջոցով:
- 12) Սպառողին տեղեկացնել Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:
- 13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի Էլեկտրական Էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուկ և զադտնաբառ:

4. Մատակարարն իրավունք ունի՝

- 1) Սպառողից պահանջել վճարելու սպառած Էլեկտրական Էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

www.ena.am 3

- 2) Սպառողից պահանջել մատակարարված Էլեկտրական Էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

5. Սպառողը պարտավոր է՝

- 1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած Էլեկտրական Էներգիայի արժեքը իր կողմից սպառված Էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:
- 2) մատակարարվող Էլեկտրական Էներգիան օգտագործել ոչ կենցաղային նշանակությամբ:
- 3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող Էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը:
- 4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառման սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին:
- 5) իր սեփականությունը հանդիսացող Էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, Էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

6. Սպառողն իրավունք ունի՝

- 1) կնքել առևտրային հաշվառման սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառման սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառման սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպություններին:
- 2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառման սարքը փոխարինելու համար:
- 3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառման սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

www.ena.am

3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՑԻ ԶՆԱԿԻ ԵՎ ԱՐՇԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎճԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված Էլեկտրական Էներգիայի բանակությունը, քաջառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառման սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրարկով քաջառականելու միջոցով:
8. Եթե առևտրային հաշվառման սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված Էլեկտրական Էներգիայի բանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված ընդունվում է Էլեկտրական Էներգիայի այդ բանակը:
9. Առևտրային հաշվառման սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:
10. Առևտրային հաշվառման սարքի խախտման (Էլեկտրական Էներգիայի բանակության սխալ գրանցման) դեպքում սպառված Էլեկտրական Էներգիայի բանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:
11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած Էլեկտրական Էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված Էլեկտրական Էներգիայի բանակության արտադրարկով: Հանձնաժողովի կողմից Էլեկտրական Էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:
12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված Էլեկտրական Էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված Էլեկտրական Էներգիայի բանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:
13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմեր ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

www.ena.am 5

14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ՝ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:

15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների թագավորության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

4. ԷԼԵԿՏՐԱԿԱՆԱԿԱՐԳՈՒՄԸ, ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՐԴԱԴԵՑՈՒՄԸ

16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԵՄՕԿ-ով: Եթե սպառողի (բացառությամբ բնակչության) Էլեկտրամատակարարման սինժանապահովում է Էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԵՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:

17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԵՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

18. Չի թույլատրվում այն սպառողների Էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց Էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մարտային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԵՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:

19. Սպառողը (բացառությամբ բնակչության) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N6 հավելվածում ամրագրել՝

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԵՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:

23. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հոգրություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս Էլեկտրական Էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դրա արդյունքում իրականացվում են ԵՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՏՄԱՆՆԵՐ

24. Սպառողի Էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող Էլեկտրատեղակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԵՄՕԿ-ով սահմանված կարգով:

25. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:

26. Սպառողի կողմից (բացառությամբ բնակչության) վերստուգել հաշվառքի սարք (հաշվի) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:

27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԵՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:

28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԵՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն Էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված N91) ստանալու միջոցով՝ ԵՄՕԿ-ով սահմանված կարգով:

1) ԵՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԵՄՕԿ-ով սահմանված Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման:

2) Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:

20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի Էլեկտրամատակարարումը՝

1) սպառված Էլեկտրական Էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում:

2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել Էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված Էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ Էլեկտրական Էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից:

3) եթե Սպառողը Էլեկտրական Էներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով:

4) Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում:

5) Սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս Էլեկտրական Էներգիան սպառելու դեպքում:

6) Էլեկտրական Էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:

21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի Էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում:

2) Էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԵՄՕԿ-ով սահմանված դեպքերի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՐՔՈՒՄԸ

29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԵՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

30. Եթե Սպառողի Էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԵՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

31. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

32. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից Էլեկտրամատակարարման սպառված Էլեկտրամատակարարման Էներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

7. ՖՈՐՍ-ՄԱԳՈՐԱՑՈՒ ԻՐԱՎԻՆՔՆԵՐ

33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն են կրում, եթե այն հետևանք է Ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով Ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

